Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
2065

1999

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՑՐԲԵՆԱՐԱՆ ԵՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Նիկողայոս Տէր Ղեւոնդեանց

743

1871.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՅ ԷՆՖԻԱՆՃԻԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

ՏՓԽԻՍ

Дозволено цензурою. Тифлисъ. 25-го Октября 1871 г.

42065-60

Հ 2068

ԻԻՐ

ՀԱՅՐԱԽՆԱՄ ԵՂԲՕՐԸ

ՍՈՒՅԵՂ ՔԱՀԱՆԱՑԻ

Տէր Ղեւոնդեան



ԻԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՍՏԱԿԸ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՔՈՎ

Ն-ԷՐ-ՄԵ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ։

ՑԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Աչքի առաջ ունենալով մեր ուսումնարանների զուրկ լինելը դասագրքերի կողմից, նա մանաւանդ փորձով համոզուելով որ առանց օրինաւոր դասագրքի շատ դժուար է զարգացնել երեխային առանց վնասելու նորա մտաւորական կարողութիւնը, ես կարևոր համարեցի, այս չարիքների առաջը դէթ մասնաւորապէս առնելու նպատակով աշխատասիրել մի սկզբնական դասագիրք նոր ոճով, մանաւանդ դասախօսութեան նոր ոճը ընդունելով մեր մէջ, այսպիսի մի ձեռնարկի կարևորութիւնը անհրաժեշտ է։ Իմ նպատակիս հասնելու, որպէս և մի թէթև ծառայութիւն մատուցանելու համար հայկական մատաղ սերընդին առհա՛ ես աշխատասիրեցի այս Այբբենարան և սկզբնական ընթերցարանը, հետևելով Ռուսացմանկավարժ Ուշինսկու Մայրենի Լեզու անունով գրքուկի ոճին։ Այն ամենայն յօդուածներում, որոնք վերաբերում են մանկավարժութեան ընդհանուր նպատակին, ես որքան հնար էր հետևեցի Ռուսականին, իսկ այն մասնաւոր յօդուածները, որոնք Ուշինսկին առել է Ռուսական կեանքից ես կարևոր համարեցի բաց թողնել և նոցա տեղը լրացնել Հայկական կեանքից առած, ուրեմն և մանուկների կենցաղական շրջանին աւելի համապատասխանող առակներով, առածներով, հանելուկներով և երեխայական երգերով (1)։

Յաւում եմ, որ գրքոյկը չի կարող ունենալ այն բոլոր լրացուցիչ մասները որը ունի Ռուսականը և այն երկու պատճառով. Ա. ես չկարողացայ իմ գրքի մէջ ամփոփել ձեռագիր այբբենարանը, որովհետև ուղիղ ասելով, մեզանում չկայ գրութեան մի կանոնաւոր սիստեմայ, որին կարողանայի հետևել գրքուկի այս մասում։ Բ. Ինչ ինչ հանգամանքներ չընեցին ինձ զարգարել գրքոյկը այն ամենայն պատկերներով, որոնք անփոփուած են Ռուսականում։

1. Արջի ոտի և աղուէսի առակները նոյնութեամբ պատվում են մեր մէջ։ Աքաղաղի և կատուի առակները ես առայ միայն Ռուսականից։

Բայց և այնպէս յոյս ունիմ, որ իմ փոքրիկ աշխատութիւնը ներողամիտ ընդունելութիւն կըգտնի մեր յարգելի ուսուցիչների կողմից, որոնք և սորան կըգտանեն համեմատական կէտից, աչքի առաջ ունենալով նիւթերի պակասութիւնը, որը կրել ենք այս փոքրիկ գրքուկը կազմելիս (1)։

Սեպուհ պարտականութիւն եմ համարում յիշել, որ Վ. Ադուլիսի երկսեռ ուսումնարանների Հոգաբարձութիւնը բարեհաճեց օժանդակել գրքուկիս տպագրութեանը, կանխօրէն գնելով իրանց ինամատարութեանը յանձնուած ուսումնարանների համար հարիւր մանեթի։ Պատիւ եմ համարում առաջարկել Նորան իմ հրապարակական շնորհակալութեան ջերմ հաւատիքը։

Քանի մի խօսք գրքի դործածութեան մասին։

Ինչ որ կրվերաբերի գրքի առաջին մասին, ես պէտք է ասեմ, որ նորան կազմելիս աչքի առաջ եմ ունեցել "Հայերէն կարդալ և գրել ուսուցանելու հրահանգը„ իւրաքանչիւր մի վարժութեան բառեր երկու խումբ բաժանելով, առաջին խմբի մէջ ամփոփեցի հեշտ լուծելու բառեր, իսկ երկրորդում դժուարներ։

Այս վերջինումս վարժապետի օգնութիւնը ընթերցանութեան ժամանակ, կարևոր է։ Եւ այս մասը կանոնաւոր դործածելու համար պէտք է հետևել վերոյիշեալ Հրահանգին։

Գրքուկի երկրորդ մասի ձևերին և եղանակին ծանօթացնելու համար ահաւասիկ նոյն իսկ Ուշինսկու խօսքերը. „Այբբենարանը ուսուցանելու համար այն ձևով, որը մենք առաջարկեցինք

(1) Աշխատասիրողը մտադիր է փորձարկել տալ այն ամենայն պատկերները, որոնք կարևոր են գրքի I և II մասերի համար, նայելով սորա ընդունելութեանը, նա և աշխատել երկրորդ տպագրութեան ժամանակ, եթէ կարժանանայ իմարկէ կցել սորա հետ ձեռագիր այբբենարանի մի օրինակ, որի համար նա այսօրից մտածում է։

ենք, (որը ցոյց է տալիս և Հրահանգը) բաւական է վեցամիս ժամանակ։ Իհարկէ կարելի է երեխային աւելի շուտ կարդալ սովորեցնել, բայց ես չեմ ճանաչում մի նպատակ, որին հասնելու համար կարելի լինէր չտապել այս գործում։ Ինչ օգուտ նորանից, եթէ մենք բացանենք մանուկի առաջ գիրքը, նախ քան նա կը հասկանար և մի զուարճութիւն կը զտնէր կարդալում։ Ես լաւեմ համարում երեխային առանց չտապելու ընտելացնել կարդալուն և գրելուն. բայց սորա հետ զարգացնել նորա ուշադրութիւնը, բերանացի խօսակցութիւնը, միտքը և հարստացնել նորա յիշողութիւնը կենդանի պատկերներով ու անսխալ խօսքերով այդ պատկերները բացատրելու համար, և վերջապէս առաջնորդել նորան փոքր առ փոքր դեպի կենդանի մայրենի լեզուն։

Սորանից յետոյ պ. Ուշինսկին յայտնում է իւր կարծիքը, թէ որքան դժուար է սկզբնական դասագիրք կազմել ամենայն կատարելութեամբ և խնդրելով որ իւր ձեռնարկը քննեն իրանց մէջ սոյն նպատակով հրատարակուած գրքերի հետ համեմատելով, անցնում է գրքի բացատրութեանը, խօսելով իւրաքանչիւր մասի վերայ առանձին առանձին, որից մենք առաջ կբերենք հետեւեալը։

Առարկաների անունները իրանց սեռին նայելով։

Ինչպէս մենք բարեբաղդաբար ազատ կացուցինք մեզ անմիտ վանկերից, նոյնպէս ամենայն կարելի միջոց գործ դրինք նաև ազատ կացուցանել մեզ և ձանձրացնող բառերի ընթերցումից. բայց և այնպէս ընթերցանութիւնը ուղղակի սկսել այնպիսի առարկաներից, որոնք որքան և իցէ ձիգ միտք ունին, նոյնպէս դժուար է։ Տասը տողանի մի առակ այնքան ջանք է պահանջում մանուկներից, որ նոքա շատ դժուարութեամբ կը կարողանան հասկանալ նորա միտքը։ Բացի սորանից, փոքրիկ կարդացողը անդադար սխալներ է անում. ուսուցիչը դադարեցնում է նորան, ուղղում է, և ընթերցանութիւնը, որքան և զուարճալի լինէր կորցնում է իւր գրաւիչ ազդեցութիւնը և

մեքենայական ձև է ստանում։ Մանուկը մտաբերում է ձայները, արտասանում է բառերը և ուշադրութիւն չէ դարձնում նորա բովանդակութեան վերայ. հետևաբար, առաջին իսկ դասերից վատ սովորութիւն է ստանում և կարդում է, առանց հասկանալու իւր կարդացածը։

Այս ծայրահեղութիւններից ազատ լինելու համար ես փոքրը առակների հետ գրի և առանձին բառեր, որոնց դասաւորեցի խումբ խումբ։ Առակները կարդալիս ուսուցիչը պէտք է աշխատի ուղղել գլխաւոր սխալները, որոնք փոփոխում են առակի միտքը, որ մի գուշէ իւրաքանչիւր չնչին սխալի համար ընթերցանութիւնը ընդհատուի։ Իսկ իւրաքանչիւր առանձին խումբերի ընթերցանութեան ժամանակ պէտք է պահպանել իւրաքանչիւր տառի ճիշտ հնչիւնը, իհարկէ, որքան կարելի է այս բանը անել մանուկների գործարանների կազմութեանը նայելով։ Բացի սորանից եթէ ուսուցիչը կը թելադրի մանուկներին ուղղակի կարդալ այս խումբերը, դասական առարկաները, [illegible]ները, կարասիքը, ուտելիքը, խմելիքը, և այն, [illegible] իւրաքանչիւր խումբ կարդալուց առաջ ուսուցիչը պէտք է խօսի այդ մասին աշակերտների հետ։ Այսպէս օրինակ, կեռ գիրքը չբացած, ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թէ ինչպէս են անուանում այն բոլոր առարկաները, որոնք գտնվում են դասատան մէջ։ Յետոյ երբ աշակերտները բարձր և պարզ կ'տան նոցա անունները, ուսուցիչը սկսում է խօսել իւրաքանչիւր առարկայի վերայ առանձին, բաց թողնելով աւելորդ մանրամասնութիւնները։ Գլխաւորապէս այն տեսակ զրոյցը պէտք է հետևեալ հարցերին պատասխանի. թէ ինչի համար է առարկան ինչ նիւթից (ինչից) է շինած նա, ովէ շինել նորան։ Երբեմն եթէ հարմար յամարուի, կարելի է հարցնել նա և առարկաների դոյնը, նորա ձևը և մասերը։ Մի կամ երկու առարկայի վերայ կարելի է երկար կանգնել, իսկ միւսները համառօտ անցնել։ Յետոյ երբ որ մանուկները կըհաշուեն բոլոր դասական առարկաները

ուսուցիչը կը հարցնի նոցա, թէ ով ինչ խաղալիք ունի և այնուհետև կը սկսին զրուցադրել խաղալիքների մասին, զվարաբերեալ նոցա, որոց անունները զետեղուած են գրքի մէջ։

Այս համարները կարդալու ժամանակ, այն բոլոր բառերը որոնք դժուար են ընթերցանութեան համար, և որոց մէջ մի քանի բաղաձայնների մերձաւորութիւնները դժուարացնում են մանուկների գործը, ուսուցիչը ինքը աշխատում է հնչական ոճով բացադրել և ապա ամեն մի աշակերտի առանձին առանձին և որքան կարելի է ճիշտ կարդալ տալ ամեն մի բառ։

Ամեն մի համարում առարկաների իւրաքանչիւր տեսակը կարդին դասաւորելուց յետոյ գալիս է նոյն առարկաների մի քանի տեսակների խառն դասաւորութիւնը միմեանց հետ. օրինակ, առաջին համարում Գնտակ, Գրիչ, Քանոն, Տիկին, Գիրք, Պատուհակ, գրատախտակ, Զիլկափայտ և այլն։ Ուսուցիչը պահանջում է, որ աշակերտը ամեն մի բառ կարդալիս ասի, թէ դա ինչ բան է առարկայ է թէ խաղալիք է գրիչը դասական առարկայ է և այլն։

Վերջապէս կարելի է և այսպէս անել, որ մի աշակերտ կարդայ բառերը. իսկ միւսը ասի թէ դա ինչ առարկայ է։ Եթէ աշակերտը ուշադրութեամբ չը լսեց, անշուշտ կը սխալուի։ Այս ուսուցիչը պահանջում է, որ աշակերտները կարդան միայն դասական առարկաների անունները, բաց թողնելով խաղալիքները և ընդհակառակն։ Սա կուսուցանէ մանուկներին կարդալ լուռ։

Այս վարժութիւնների նպատակը ակներև է։ Սոքա բացի կանոնաւոր և պարզ ընթերցանութեան մէջ վարժեցնելուց, որը սակայն, չի պահանջում մի բառից միւս բառ անցնելը չուտով, այլ բառերի կրկնութիւն, զարգացնում են աշակերտի մէջ ուշադիր լինելու ունակութիւնը ընթերցանութեան նոյն իսկ առաջին դասերից։ Բայց որ կատարելապէս գնահատուի այս վարժութիւնների կարևորութիւնը և բացադրուի, թէ ինչի են նոցա

այնչափ շատ տեղ եմ տալիս բոլոր գրքի մէջ, քանի մի խօսք ասեմ մանուկների ուշադրութեան և նոցա զարգացնելու պայմանների մասին։

Սորանից յետոյ պ. Ուշինսկին սկսում է մանրամասնաբար բացադրել այս հոգեկան յատկութեան (ուշադրութեան) երկու տեսակները (Пасивный, Активный) և այն եզրակացութեանն է հասնում, որ այս ունակութիւններից մինի զարգացումը առանց միւսի վնասակար է. երկուսի զուգակցիւ զարգացումը միայն կարող է պատրաստել մանուկից հասուն և ամենայն կատարելութեամբ մարդ։ Մեր գրքուկի յառաջաբանութիւնը մենք մի առանձին գիրք չինելու նպատակը չունենալով, առ այժմ թողումենք այս թէև շատ օգտակար բացատրութիւնը, և շարունակում ենք։

Ինչ որ ասացի ես առաջին համարով վարժութեան մասին նոյնը վերաբերվում է մինչև 18 երորդին։ 18 երորդ համարում անունները այլ ևս չեն բաժանած, այլ խառն են դասաւորած այն նպատակով, որ մանուկները, երբ ուսուցիչը կանխապէս կը խօսի և կսեպհականի նոցա ամիսների անունները կարդով և տարուայ եղանակներին համաձայն, ինչեանք կը կարողանան, ինչպէս պետք է, կարդի դնել դասագրքի բառերը։ Մանուկները կարդում են. հոկտեմբերը ձմերային ամիս է, մայիսը գարնանային ամիս է և այլն։ Յետոյ կարդում են միայն գարնանային ամիսները, ապա աշնանայինները և այլն։ Եւ վերջապէս գրում են բոլոր ամիսների անունները, կարդով և տարուայ եղանակներին համաձայն։ 18 երորդ համարից յետոյ շարունակ դալիս են այն տեսակ վարժութիւններ, ուր խառնած են միասին բայց այլատեսակ առարկաների անուններ։ Առանց կանխօրէն խօսակցութեան երեխաների հետ, այս վարժութիւնները ունեն ոչինչ նշանակութիւն։

Այս տեղ վերջացնում եմ ես իմ խօսքը, բաց թողնելով պ.

Ուշինակու ասածները գրքի միւս մասերի վերաբերութեամբ: Նոցա առաջ բերելը չատ կերկարացներ մեր գրքուկի առանց այն ես երկար յառաջաբանը: Եթէ չդաւաճանեցին ինձ իմ յիշողները, ապա ես մի ուրիշ անգամ գուցէ բաղդ կունենամ այս ամէնը մանրամասն բացագրելու. երբ յիշեալ գրքուկի երկրորդ մասը, որը արդէն պատրաստվում է, պատիւ կունենամ տպագրելու (1):

Մասնաւոր նկատողութիւններ:

Մայրենի լեզու, առաջին դարի. հանելու-ինչ

Երես. 17, տրեխներ: —19, գերանդի: —32, սոկոն: — մանուշակ: —
21, Մարդու մանկութեան, երիտասարդութեան և ծերութեան ժամանակը:
31, ա. բերան և ատամներ, բ. քթածակեր. և գ. գլուխ:
31, Երբ երեխային-մկրտում են նորան անուն են ընծայում.

Երես. 25, Անանիա—տուարածի երեկոյեան երգ: 15 Ծիծեռնակի նորեկ գալուստը ողջունելու գիւղական երգ: Ըստ նոցա. Բաշխուլ հաւը ծիծեռնակների մեծ մայրն է պառաւած, և ցաւագար աչքերով. և երբ ծիծեռնակները աշնանը յետ են դառնում դէպի տաք երկիրները, նոցա մեծ բաշխուլ հաւը հարցնում է, թէ արդեօք ով մարդկանցից մտաբերեց իրան—ծերունի հաւը, որ այդպիսի գեղեցիկ երգիչներ է տուել նոցա: Մտաբերողին ծերունի հաւը օրհնում է, չմտաբերողներին անիծում է:

Երես. 19 Ճչանակ, մի տէսակ խաղալիք է որը ճոճելով և ճրռճռացնելով վերջին զատկական տօներին գիւղական մանուկները երգում են:

Երես 46 Սուրբ Սարգսի երգը գիւղացի մանուկները երգում են մի երթկից միւսը անցնելով և մասնաւոր տուրք ժողովելով:

Պտաս ունիմ խնդրել սոյն ձեռով դասագիր շինող պարոններին. չվերառնել այն հատուածները, որոնք ես թէև ժողովրդական կեանքից առնելով մշակել և յարմարեցրել եմ մանկական հասակին, նոյնպէս և այն համարները, որոնք կազմուած են ինձանից:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱԲԲԲԵՆԱՐԱՆ:

Ա ա. Մ մ. Շ շ. Ի ի. Տ տ.

Ու ու. Ն ն. Է է. Ջ ջ. Կ կ. Ե ե.

Զ զ. Ս ս. Դ դ. Ը ը. Ռ ռ. Ր ր.

Բ բ. Գ գ. Ո ո. Օ օ. Վ վ. Ւ ւ.

Լ լ. Ծ ծ. Ճ ճ. Չ չ. Ձ ձ. Հ հ.

Խ խ. Ղ ղ. Ց ց. Փ փ. Պ պ. Ֆ ֆ.

Ժ ժ. Քֆ. Թ թ. Յ յ.

§ Դաս. ա.

ա. մ. շ.

աշ, շա, ամ, մա, մաշ. շամ, մաշա, շամամ։

§ Դաս. բ.

ի. տ.

մի, շիշ, շատ, տաշ, տատ, մատ, տամ, ատամ, միշտ։

մի շիշ տամ. միշտ մի շամամ տամ. մի տատ. շատ ատամ։

§ Դաս. գ.

ու. ն.

ուշ, նուշ, շուն, տուն, տուտ, մուկ, մանուկ։

ուշ ու նուշ։

Նա շատ շամամ ունի։

Նա ունի մի տուն ու մի շուն։

§ Դաս. դ.

է. ջ.

մէկ, շէկ, էջ, մէջ, ջան, էակ։

ջանամ, ջանիկ, ականջ, անջինջ։

Նա մի տուն ունի։ տան մէջ կենում է մի մանուկ։—կատուն ականջ ունի։

§ Դաս. ե.

ե. կ.

տակ. կամ. կան, եկ, եմ, շեմ, կաշի, ուտեմ, մաշեմ։

շեշտ, կենտ. չե—չեմ, տանջեմ։

Կենտ մի տիկին ունեմ ու մի շամամ։

Իմ տատը միշտ շամամ կուտի։

Նա ինն ատամ ունի։

§ Դաս. զ.

Ն ու ջ. Ա ն ու ջ. Շ ա մ ա մ. Տ ա տ. Մ է կ. Ե կ. Ի մ. Ջ ա ն ի կ։

նուշ, անուշ, շամամ, տամ, մէկ, եկ, իմ, կատու, ջանիկ։

Նա ունի մի տուն։ Տան մէջ կենում է մի մանուկ։

Նա մի կատու ունի։

§ Դաս. է.

Ջ, է. Ս, ս.

ուս, սուս, տաս, միս, ասիս, ես. տես, կէս, սա, չէ, չեշ, չամիշ, շունչ, չանկ։

Նա միս չի ուտում, ատամ չունի։
Սուտ չէ, չամիչը անուշ է։

§ Դաս. Ը.

Դ, դ. Ը, ը.

դա, դաս, դատ, դու, դանակ, դասատուն։
ըն—տիր, ըն—կեր, ընկուզ, դաշտ, դունչ, տենդ, տասը։
Ես իմ դասը իմանում եմ։
Իմ ընկերը չէ իմանում։
Ադամ, դու իմանում ե՞ս դասդ։
Չէ՛, չեմ իմանում։

§ Դաս. Ը.

Ռ, ռ. Ր, ր.

դառ, սառ, ամառ, դուռ, նուռ, ռոմ.
սար, չար, մուր, դուր, տուր, կեր, կիր. կամար։
տակառ, կատար, կարկուտ, մարդ, առուտուր։
Մի ման կերակուր տու՛ր ուտեմ։
Մարդը առուտուր է անում. աշակերտը կարդում է։
Մեր եր—կրումը շատ սարեր կան։

§ Դաս. Ժ.

Բ, բ.

տուն, բուն, արի, բարի, բան, բեր։
բերդ, արաբ, բրուտ, բարեկամ, բարակ։
Մեր բարեկամը բրուտ է։ Բրուտը շատ ամաններ է շինում։

§ Դաս. Ժա.

Գ, գ.

գամ, գարի, անգամ, գիր, անգիր, գին, գինի, անգին։
անգամ, գրիչ, գտակ, գունտ, Գարեգին։
Գարեգինը գրիչ չունի ու չի գրում դասը։
Իմ գտակը շատ սիրուն է։
Գինին կարմիր է։

§ Դաս. ԺԲ.

Ո, ո. Օ, օ.

որ, ոտ, ոչ, ոգի, որդի, օր, մոր, մոտ.
մոմ, չոր, գոմ, կոկոմ, ոսկոր, որկոր.
ոսկի, ոչինչ, որբ, որս, Ոսկան։
Որբը նա է, որ օգնական չունի։
Որսի միսը ուտում են։
Ոսկանը իմանում էր դասը։

§ Դաս. ԺԳ։

Վ, վ. Ւ, ւ.

կով, սով, վար, վառ, վառիկ, վերին, ով,
նաւ, կաւ, եւ, սեւ, անիւ, աղնիւ կռիւ.
բաւական, աւերակ, աւետարան, Վարդան։
Նաւը շրջում է ջրի երեսին։
Անիւը ակն է. Աւետարանը սուրբ գիր է։
Վարդանը կռուասէր է. ես կռիւ չեմ սիրում։

§ Դաս. ԺԴ.

Լ, լ.

լաւ, կալ, լալ, իլիկ, չիլիկ, լարել.
լաստ, տկ-լոր, գլորել, Լեւոն։
Լեւոնը լաւ աշակերտ է, նա մի չիլիկ ունի։
Իմ տատը իլիկ ունի· նա մանում է։
Լուսինը լոյս է. տալիս։

§ Դաս. ԺԵ.

Ծ, ծ. Ճ, ճ

ծառ, ծիլ, ածիլ, ծիծ, ծեծ, ծոր.
ճար, ճոճ, ճանճ, տաճար, անճար.
Կարճ, ծանր, ծիծեռնակ, լծակ, կարիճ, կարծր։
Ծիծեռնակը երգում է։ Ծառը ծլում է։

Կովը ծնում է։ Կարիճը կծում է։
Անճարը կուտի բանջարը։

§ Դաս. ԺԶ.

Ձ, ձ. Ջ, ջ.

ձի, ձու, օձ, ինձ, սինձ, ձոր, տանձ, գանձ.
ձեզ, սէջ, մեզ, եզն, զօր, գզիր, աւազ, աւա-
զակ.
* ձմերուկ, ձմեռն, գանձանակ, գաւազան,
աւազան։
Մեր տանը Ջատկին կարմիր ձու շատ է
լինում։
Իմ ծեր տատս գաւազանով է մանգալի։
Ինձ աւազանումն են մկրտել։

§ Դաս. ԺԷ.

Հ, հ.

ուր, ջուր, հուր, հին, հաւ, հեռու, հովիւ.
հինգ, հիմն, ջր-հոր, ար-հեստ, Համբարձում։
Ես մի հաւ ունեմ, նա ամեն օր ձուէ ածում։
Հովիւը գառներ շատ ունի։
Գառները արածումեն դաշտումը։

§ Դաս. ԺԸ.

Խ, խ.

խաչ, խակ, խաղ, ձախ, խուլ, ծուխ, աճուխ, մոխիր, ոխ, սոխ, փոխ, սեխ։
մորեխ, խոհեմ, խնձոր, խիստ, խուրձ, ճախարակ, Խորէն։
Խակ միրգը վնասէ։ Ես հասած խնձոր շատ եմ սիրում։

§ Դաս. ԺԹ.

Ղ, ղ.

օղ, օղի, աղ, աղի, շաղ, ճաղ, մաղ, կաղ, ուղիղ, ուղեղ, խիղճ, իղձ, ուղտ, բաղարճ, ճընճղուկ, Ղազրիկ,
Ղազրիկը մի շատ սիրուն ճն-ճղուկ ունի։
Նա անդադար երգում է։

§ Դաս. Է.

Պ, պ.

Պապ, պար, կապ, կապիկ, կոպէկ, պատ, պանիր, ոսպ.
վարդապետ, ապրուստ, ապերախտ, մարդ։

Իմ պապը ինընբսուն տարեկան է։
Վարդանը իմ ընկերն է։
Վարդը ծաղիկ է. կապիկը կենդանի է։

§ Դաս. Է.

Ց, ց. Ձ, ձ.

հաց, ցախ, լաց, բաց, կաց, կացին, վեց, ցեց, խուց, խոց, խուրձ։
ուժ, կուժ, բաժին, արժան, արժանի, ժամ, ժամանակ, ժողով։
Վարժապետ, ժառանգ, բժիշկ, ժանգոտ։
Աղ ու հաց, սիրտը բաց։
Հաց ու պանիր, կեր ու բանիր։
Շունը շանից, երկուսը մի տանից։

§ Դաս ԷԲ.

Փ, փ. Ֆ, ֆ.

փուլ, փակ, փող, փոս, փափ, կանեփ, փափուկ, փլաւ, Փարիսեցի։
մաֆրաշ, զաֆրան, ֆուրգօն, ֆաէտօն։
Երեխան փուլ է ուտում։
Ես փլաւ շատ եմ սիրում։

§ Դասն ԽԳ.

Ք, ք. Թ, թ.

թան, թաղ, թաթ, ճաթ, գութան, թութակ, թև, թեթև, Թոմաս, Թորոս։
քինթ, թանաք, քաթան։
թամք, քուրդ, քուրք, թուրք, Քրիստոս։
Թութակը թռչուն է. նա սովորում է խօսել։
Թոմասը շատ խելօք մանուկ է. նա իմ ընկերն է. մենք միմեանց շատ ենք սիրում։

§ Դասն ԽԴ.

իւ (բառերի մէջ)։

իւր, հիւր, իւղ, հիւղ, ճիւղ, միւս, հիւսն, մեծութիւն, լաւութիւն։
Մենք ամառը գիւղ ենք գնում։ Գիւղը շատ ուրախ տեղ է։
Գիւղացին շատ աշխատասէր մարդ է. նա ամբողջ ամառը վարում է, ցանում է և մեզ համար կերակուր է պատրաստում։
Մի արհամարհիր գիւղացուն, նորա կոշտ ձեռներն են քեզ կերակրում։

§ Դասն. ԽԵ.

Յ, յ.

* յիսուն, յետին, յիմար, յիշատակ։
* Հայ, փայ, վայ, բայ, այս, այն, հայր, մայր
* քոյր, թոյն, նոյն, լոյս, գոյն, բոյն։
* գոյութիւն, գոյական, հոյակապ, Խոյեցի։
* երեխայ, արքայ, կամայ, ակամայ։
Յարութիւնը իմ ընկերն է։
Երէկ ես մի Խոյեցի հայ տեսայ։
Ես Հայերին շատ եմ սիրում, որովհետև ես էլ հայ եմ։
Երբ որ մեծանամ ու խելօք մարդ դառնամ, այն ժամանակ ես խեղճ մարդուն, մանաւանդ հային, շատ կ'օգնեմ։
Իմ հայրս ինձ ասում է, որ եթէ լաւ կարդամ, կարող եմ վերջը խելօք մարդ դառնալ։
Այս պատճառով ես շատ եմ աշխատում և դասատանը վարժապետիս պատմածները ուշք ու մտքով եմ լսում։
Ես շատ սիրում եմ իմ հօրը, մօրը և վարժապետներին. նրանք էլ ինձ են սիրում։

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ,
Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ,
Ն, Շ, Ո, Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Ր,
Ց, Ւ, Փ, Ք, Օ, Ֆ:

—

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ,
խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ,
պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, օ, ֆ:

—

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի,
լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ,
ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ,
ք, և, օ, ֆ.

—

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ. ծ.
հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ռ. ս. վ.
տ. ր. ց. ւ. փ. ք. օ. ֆ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

(Ակզբնական ընթերցարան այբուբենից յետոյ):

№ 1 Դասական առարկաներ և խաղալիքներ:

Դասական առարկաներ. գիրք, գրատախտակ, տետրակ, գրիչ, մատիտ, քարեգրիչ, թանաքաման, քանոն:

Խաղալիքներ. գնտակ, չիկափայտ, տիկին, բրգյան, վէգ:

Գրքեր. Դոպակ (Ռոքֆ). Քանոն Տէրէնտ. Դիրք Զիլիա-

փոյտ. Գրատախտակ. Քարեգրիչ. Բզդան. Մատիտ. Թանա-
գոման.

* Ով կրկարդայ, նա մարդ է։ -Ով որ աշխատի, նա
կուտի։—Իմացողին մին, չիմացողին հազար։

Լուսացաւ։

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն է բարին,
Ծիսն է ծաւին,
Հաւն է թաւին,
Աշխատասէր վերկաց բանի,
Ծոյլ մարդու քունը տանի։

Երկնքի դռներն բաց էր,
Ոսկէ աթոռը դրած էր,
Քրիստոսը փքէն նստած էր,
Լուսաւորիչը կանգնած էր,
Մեծ ու պստիկ դրում էին,
Արդարները խաղում էին,
Մեղաւորները լալիս էին։

Ինձ հետ մի խաղար։

Քոյր ու եղբայր խաղում էին միմեանց հետ։ Եղ-
բայրը իւր քրոջը ասաց. „Ինձ հետ մի խաղար, ձեռը մի
տար իմ բզզանին։„—Իսկ դու ձեռը մի՛ տար իմ տիկի-
նին, պատասխանեց քոյրը „։ Մանուկները հեռացան մի-
մեանցից, բայց փոքր ժամանակից յետոյ, երկուսն էլ տրխ-

րեցան։ Ինչի՞ տխրեցան մանուկները։

№ 2. Կարասիք և Ամանեղէններ։

Կարասիք. սեղան, աթոռ, բազկաթոռ, գահա-
ւորակ, մահճակալ, օրօրոց, պահարան, նստարան։

Ամանեղէններ. թեփշի, գոռաթ, բաժակ, խե-
ցի (*), պղինձ, կուժ, հեշտաեռ, (սամավար,) պնակ։

Մահճակալ. Օրօրոց. Կուժ. Պղինձ. Տիկին. Սեղան. Գիրք.
Խեցի. Բազկաթոռ. Գոռաթ. Պահարան. Բաժակ. Գրիչ։

Ամեն օր կուժը ջուր չի բերիլ։—Կուժը արևի զօ-
րութիւնը չի իմանալ։—Կուժը ջրի ճանապարհին կրկոտրի։
Մի բաժակ ջուր, ով ուզի տուր։—Ա՛յ կուժ, քեզ ասեմ,
այ կուլայ՝ դու իմացիր։

Բարսեղ, ձին կոլի դիր խուրջինը, գցի կժի վերայ,
գնա՝ ջուր բեր։

Արև։

Արև՛ արև՝ ելակ ելակ,
Զիզի քարին վեր ելակ։

Որ ընկնեմ, ձոր ընկնեմ,
Կարմրաձձիկ դուրա ընկնեմ։

Արև՛ արև՝ վեր արի,
Զիզի քարին տիտիկ արա,

Մեր ոչխարին մոիկ արա,
Որ դայլը դայ իմաց արա։

№ 3. Ուտելիք և խմելիք։

Ուտելիք. փաս, սպաս, տոլմայ, չիրդմայ, կաթ-

(*) Ծաղկաման։

նեսպաս, կոլոլակ, գաթայ, նաղուք, հաց, թթու, բաղարջ, տապակայ, խորոված, մածուն, սեր, թան։

Խմելիք. ջուր, թէյ, սուրջ, կաթը, գարեջուր, գինի։

Ջ՝ուր. Փլա՝. Թէ՝յ. Քարէգրիչ. Թլու՝. Հայ. Սուրջ. Կոլոլ. Նաղաք։ Կաթը. Սպա՝. Սէր. Գարէջուր. Գինի. Գաւառ. Մահճակալ. Գնդակ. Թան. Մածուն։

Ամեն անգամ տաղը գաթայ չի բերիլ։ Աղ ու հաց, սիրտը բաց։—Հաց ու պանիր, կեր ու բանիր։ Ինչտեղ հաց, հնտեղ կաց։—Ինչտեղ գինի, հնտեղ քնի։ Հացի կլորածը, թուրը չի կտրիլ։—Ձուածեղի խաթեր, թաւի կոթը կը պաչեն։—Ջուրը իր գնացած տեղովը կերթայ։ Սերը սովորը կուտի, թանը մոլորը։—Կուշտը սովածին մանր կը բրդի։

Դրընդոզ, Կարմիր գինի,
Հաւի դոշ, Սպիտակ լոշ։

Խաբուած թուրքը։

Թուրքը երազում մածուն տեսաւ, բայց գդալ չունէր. միւս գիշեր գդալը ձեռին քնեց, բայց մածուն չըտեսաւ։

Արեգակ։

Արեգակ, արեգակ, դուրս արի, Մուկն եկել է, հանել է,
Հէրն ու մէրդ եկել են, Կատուն յետնէն վազել է,
Ոսկէ բլեթ բերել են, Գոմշի ոտը կոտրել է,
Պատի ծակը դրել են. Աղամանը թափվել է։

№ 4 Հաղնելիք։

Հանդերձեղէններ. գլխարկ, կարայ, գոտիկ, ոխալուխ, սերթուկ, վերարկու, թաթման, մուշտակ։

Մաշկեղէններ. կոշիկներ, հողաթափներ, ծուղեր, տրեխներ։

Սպիտակեղէններ. կրծկալ, սփռոց, սաւան, թաշկինակ, երեսսրբիչ, գոգնոց, շապիկ, գուլպայ։

Սառան. Տէրտէր. Սէրէնուէ. Կոշիկ. Մուշտակ. Գլխարկ. Տշրէք. Սփռոց. Հողաթափներ. Շապիկ. Տարեկ. Ծուղեր. Նէրսրբիչ. Գոգնոց. Գուլպայ. Կրծկալ. Վերարկու. Պղնձէ. Գոտիկ. Խորոված. Սուրջ։

Շատ տուր շնորհիս դամ, հաց տուր ուշիս դամ։—Դու ինձ պահի բողչամիջի, ես քեզ պահեմ մարդամիջի։—Տկլորի մոքից օրը տասնուհինգ գաղ կտաւ էր անց կենում։—Օձը իր շապիկը կը փոխի, բայց իր բնութիւնը չի փոխիլ։—Մարդու նամուսն գդակն է, կնկանը լեչակը։

Հանելուկ. Կապում եմ, մանէ գալիս, յետ եմ անում, քնում է։

Փոքր մուկիկը։

Մի օր մեծ Մուկիկը ալիւր էր մաղել, տաշտը պատրաստել, ջուրը տաքացրել, և կամենում էր մեծ խմոր հունցել։ Փոքր Մուկիկը նորա մօտ վազեց, խնդրեց, աղաչեց, սատակ պաղատեց, որ ինքը հունցի. բայց մէջը թաղուեց։

Մեծ քոյրը նորան այդ թանձր ծովից հանել կամեցաւ, բայց չը կարացաւ։ Օգնութիւն կանչեց նա՝ և իւր մօրը։ Մայրը ներս եկաւ։ Կոդք կոդքի տրին, ձեռք ձեռքի տուին, բայց խեղջ Մուկիկին հանել չը կարացին։

Յետոյ կանչեցին ալևոր հօրը։ Հայրը ներս եկաւ, մօր ձեռքից բռնեց, մայրն աղջկանից և նա Մուկիկից՝ շատ պինդ բռնեցին, սաստիկ քաշեցին, բայց չը հանեցին։ Հայրը ձայն տուեց, իւր միակ որդուն։ Որդին ներս վազեց, հօր ձեռքից բռնեց, հայրը մօր ձեռքից, մայրը աղջկանից, և նա Մուկիկից՝ շատ պինդ բռնեցին, սաստիկ քաշեցին, բայց չը հանեցին։

Որդին նոր հարսին օգնութիւն կանչեց։ Նոր հարսը եկաւ, Մուկիկին բռնեց, խմորից հանեց և ինքը հունցեց։



№ 5 Գործիք և սարք։

Գ ո ր ծ ի ք. արօր, չութ, ցաքան, ձևիչ, շղթայ, խոփ, մանգաղ, գերանդի, կացին, մուրճ, սղոց, դուր, եղան, հասելի, փոցխ, կամն, դանակ, մկրատ, ասեղ։

Ս ա ր ք. սանձ, թիկնափոկ, լուծ, կամար, կապեր, փոքրաշ, թամբ։

Դանակ. Գարեջուր. Ձնձիզ. Կոշնիներ. Սանչ. Խոփ. Կապեր. Ջուր. Կամար. Մկրատ. Փոքրաշ. Կացին. Թամբ. Մուրճ. Գերանդի. Լուծ. Խեցի. Պշնչ. Շղթայ. Եղան. Խորոված. Ցորան. Կաճ։

Խոփդ սուր է, հանդը բաժանուել է։ Դանակի կորածը կբաղանայ, լեզուի կծածը չի սաղանալ։—Դանակը հանաք չի սիրում։—Բզկի գլխին բռնինքով տալ չի լինիլ։—Ուրարդն իր կոթը չի տաշել։—

Ք ա ն ե լ ո ւ կ։ Օրան օրան շուռ է գալիս, ոտներ չունի ման է գալիս, բերան չունի կուլ է տալիս։

Պառաւն ու հաւը։

Մի պառաւ է լինում, որը ունենում է մի հաւ. հաւը ամեն օր մի ձու է ածելիս լինում սորա համար։ Պառաւը մտածում է ինքն իրան. «Եթէ ես այս հաւին աւելի կուտ ուտեցնեմ, կարելի է մի ձուի փոխանակ երկուսը կամ երեքը ածի»։ Պառաւը այնպէս էլ անում է. իւր հաւին շատ կուտ է տալիս, բայց օրական մի ձուից էլ զըրկվում է։ Ինչի է զրկվում պառաւը ձուից։

Ճչանակ։

Ճրը, ճրը, ճչանակ,
Աստուծոյ դուռը բանանք,
Դուրսը ժամ ասենք,
Ներս գանք, պատարագ անենք,
Սև եզը մատաղ անենք,
Գոգերը չարդախ (*) անենք,
Տակը նստենք, քարդահ անենք։

№ 6. Շինութիւններ, նաւեր և կառքեր։

Շ ի ն ո ւ թ ի ւ ն ն ե ր. եկեղեցի, պալատ, ուսում

նարան, տուն, խրճիթ, սրահ, գոմ, ամբար, կալ, ջաղաց:

Ն ա ւ ա տ ո ղ մ ի ղ . նաւ, շոգենաւ, մակոյկ, նաւակ:

Ա ռ ք ե ր . կառք, շոգեկառք, սայլակ, սահնակ, սայլ:

Ն ա ա. Եղեղեցի. Խրճիթ. Բիր. Սահնակ. Գոգնոց. Սայլ. Նաւակ. Պալատ, Ջաղաց. Սայլակ. Կալ. Նաւարան. Քանան. Գուշ. Մուկոյկ. Գինի. Ռուսաստան. Դանակ. Յուկա:

Մինչև սայլը շուր չի անցնի, ճանբէն չի դրբրատվիլ:



Աղուէսի պոչը:

Աղուէս եղբայրը բաժանուեցաւ իւր ընկերից, պառաւի տունը մնաւ և պանիր գողացաւ: Պառաւը ցակհատով կտրեց նորա պոչը:

"Պառ՚ի՛կ, պառ՚ի՛կ, պոչիկ տու՛ր, կապեմ ընկերիս հանեմ:"

— Դէ ինձ համար ոչխար բեր, ոչխարն ինձ կաթիկ տայ, ես էլ քեզ քո պոչիկ տամ:

Աղուէսը գնաց հովուի մօտ. " Հովիւ, հովիւ, գառիկ տու՛ր, գառիկ տանեմ, պառիկ տամ, պառիկ ինձ իմ պոչիկ տայ, կապեմ, ընկերիս հանեմ:"

— Դէ գնա՛ ինձ համար շուր բեր:

Աղուէսը խառատից խնդրեց. " Խառատ, խառատ, շուր տուր, շուրն տանեմ հովուին տամ, հովիւն ինձ մի

գառիկ տայ, գառիկ տանեմ պառիկ՚ տամ, պառիկն ինձ իմ պոչիկ տայ, կապեմ, ընկերիս հանեմ:

— Դէ գնա՛ ինձ համար մի ձու բեր:

Աղուէսը գնաց և մի հաւ տեսաւ: " Հաւիկ, հաւիկ, ձուիկ տուր, ձուն տանեմ խառատին տամ, խառատն ինձ մի շուր տայ, շուրն տանեմ հովուին տամ, հովիւն ինձ մի գառիկ տայ, գառիկ տանեմ պառիկ՚ տամ, պառիկ ինձ իմ պոչիկ տայ. կապեմ, ընկերիս հանեմ:"

— Դէ գնա՛ ինձ համար կուտ բեր:

Աղուէսը գնաց և մի հարս տեսաւ, որ աղուն (*) էր անում: " Հարսի, հարսի, քիչ կուտ տուր, կուտը տանեմ հաւին տամ, հաւը ինձ մի ձուիկ տայ, ձուն տանեմ խառատին տամ, խառատն ինձ մի շուր տայ, շուրն տանեմ հովուին տամ, հովիւն ինձ մի գառիկ տայ, գառիկ տանեմ պառիկ տամ, պառիկ ինձ իմ պոչիկ տայ, կապեմ, ընկերիս հանեմ:"

— Դէ գնա՛ ինձ համար կաթը բեր:

Աղուէսը կովին ասաց. " Կովիկ, կովիկ, կաթիկ տուր, կաթիկ տանեմ հարսին տամ, հարսը ինձ մի քիչ կուտ տայ, կուտը տանեմ հաւին տամ, հաւը ինձ մի ձուիկ տայ, ձուն տանեմ խառատին տամ, խառատն ինձ մի շուր տայ, շուրն տանեմ հովուին տամ, հովիւն ինձ մի գառիկ տայ, գառիկ տանեմ, պառիկ՚ տամ, պառիկն ինձ իմ պոչիկ տայ. կապեմ, ընկերիս հանեմ:

(*) Յորեան մաղել և մաքրել:

— Դէ գնա՛ ինձ համար խոտ բեր։

“Տափիկ, (*) տափիկ, խոտիկ տուր, խոտիկ տանեմ, կովին տամ, կովը ինձ քիչ կաթիկ տայ, կաթիկ տանեմ, հարսին տամ, հարսը ինձ քիչ կուտիկ տայ, կուտիկ տանեմ հաւին տամ, հաւիկ ինձ մի ձուիկ տայ, ձուն տանեմ խառատին տամ, խառատն ինձ մի շուի տայ, շուին տանեմ հովուին տամ, հովիւն ինձ մի գառիկ տայ, գառիկ տանեմ պառիկ տամ, պառիկ ինձ իմ պոչիկ տայ. կապեմ, ընկերիս հասնեմ։”

— Դէ գնա՛ ինձ համար անձրև բեր։

“Ա՛ստուած, Ա՛ստուած, անձրև տուր, անձրև տանեմ տափին տամ, տափը ինձ քիչ խոտիկ տայ, խոտիկ տանեմ կովին տամ, կովը ինձ քիչ կաթիկ տայ, կաթիկ տանեմ հարսին տամ, հարսը ինձ քիչ կուտիկ տայ, կուտիկ տանեմ հաւին տամ, հաւիկ ինձ մի ձուիկ տայ, ձուն տանեմ խառատին տամ, խառատն ինձ մի շուի տայ, շուին տանեմ հովուին տամ, հովիւն ինձ մի գառիկ տայ, գառիկ տանեմ պառիկ տամ, պառիկ ինձ իմ պոչիկ տայ. կապեմ, ընկերիս հասնեմ։

Ատուած երկնքից լսեց,
Վերևից անձրև թափեց.
Աղուէսն իւր պոչն ստացաւ,
Վազեց ընկերին հասաւ։

(*) Երկիր, հող։

№ 7 Ընդանի կենդանիներ և վայրենի գազաններ։

Ընտանի կենդանիներ. Ձի, կով, ցուլ, եզը, այծ, ոչխար, խոզ, կատու, շուն, ուղտ, ջորի։

Վայրենի գազաններ. գայլ, արջ, աղուէս, չաղալ, նապաստակ, առիւծ, վագր, վարազ։

Գայլ. Եզը. Փոցի. Կով. Արջ. Ոչխար. Այծ. Ձի. Սանդ. Կապռա. Գուռնպ. Շուն. Կաղին. Խոզ. Խոզոնջած. Չաղալ. Ախոռ, Նապաստակ։

Ուղտին ասացին վեղդ ծուռն է. ասաց, ինչս է ուղեղ, որ վեղդ ուղեղ լինի—Ասած է, շունը հաչելով կ՚սատկի։ Արջի տունչը խաղողին չ՚հասաւ, ասաց, կենայ իմ հօր խերին։ Գայլի անուն է կոտրած, աղուէսը աշխարհ քանդեցաշան հետ ընկերացիր, փայտը ձեռիցդ մի դցիր։-Ձին բհիրը պոկեց, առաջ իրան դիպաւ։-Լաւ եզը լծան տակին յայտնի կրլինի։

Գայլ

Ձիւնէ գալիս քուլայ քուլայ,
Թուքը ասաց, բանս վատ է
Պառաւն ասաց՝ մոգիս կորաւ,
Գայլն ասաց փորիս դեղ է։

Աղուէս։

Աղուէսը պառկեց աղբի տակին,
Աչքը գցեց չաղ հաւի ձագին,
Նէտով կտամ աչքի տակին,
Որ մնա չըգայնա մեր բագին։

Քաջասիրտ շուն։

Շունը գայլի հոտն առաւ,
Բարձր հաչել սկսեց,
Շունը գայլին որ տեսաւ,
Ծալած պոչն իրան քաշեց,



№ 8 Զորքոտանի կենդանիներ և թռչուններ։

Զորքոտանի կենդանիներ. ձի, գայլ, արջ, ոչխար, խոզ, նապաստակ, ոզնի, կրեայ, չղջիկ, կատու, առիւծ, կով, եղնիկ։

Թռչուններ. արծիւ, ցին, փայտմորիկ, կոցահար, կաչաղակ, կ'կու, ծիծեռնակ, հաւ, ճնճղուկ, բու, հոպոպ, սարեակ։

Բոզ. Մուկը. Բուշխանոս. Նապաստակ. Գայլ. Արջ. Ծէ-

ծեռնակ. Սոկոնակ. Բու. Առիւծ. Արծիւ. Հաւ. Չղջիկ. Խլուրդ. Կաչաղակ. Պանրոյ. Կատու։

Ականել։ (*)

Ական, ական, ակն 'ի կովին,
Չալ չալ աչքեր պախրի կովին,
Ինն ականեմ, առաջս անեմ,
Թշնամունս քարերն անեմ։

Պառաւն ու Այծը։

Պառաւն մի այծ ունէր,
Ինչպէս սիրուն այծ,
Ինչպէս, ինչպէս,
Ինչպէս, սիրուն այծ։
Պառաւն իւր այծիկը
Հանդը դուրս տարաւ,
Եւ գարնան խոտումը,
Արածացրաւ։
Կուշտ կուշտ, կուշտ կուշտ
Արածացրաւ։
Մարտի վերջերումն էր,
Խիստ քամին փչեց,
Պառաւի աչքիցը
Այծը կորցրեց։

Ափսոս, ափսոս,
Այծը կորցրեց։
Նորանով գայլերը
Կերակրվեցին,
Եւ խղճուկ պառաւին
Ոտքերը թողին,
Միայն, միայն,
Ոտքերը թողին։
Պառաւը նստած է
Փունջ խոտը ձեռին,
Եւ մինչև հիմա էլ,
Կանչում է այծին.
Է'կ, է'կ, է'կ, է'կ.
Կանչում է այծին։

(*) Աչքով համարել։

№ 9 Խոտակեր և մսակեր կենդանիներ։

Ո՞վ է խոտ ուտում. Կովը, ձին, ոչխարը, այծը, նապաստակը, ճագարը, պախրան, ուղտը։

Ո՞վ է միս ուտում. կատուն, շունը, գայլը, աղուէսը, չաղալը, առիւծը, վանգրը։

Գայլէր. Ձիաններ. Սեղաններ. Կոշիկներ. Ոչխարներ. Վագրեր. Գառներ. Աղուէսներ. Դանակներ. Շներ. Տներ. Նապաստակներ. Գրքեր. Այծեր. Պախրաներ. Գառլներ. Հաներ. Ուղտեր. Թանմաններ։

Շունը որ, սովորմէ խոտ էլ է ուտում։—Շունը շանից, երկուսը մի տանից։—Շան կաղալուն մի հաւատալ։—Ամէն օրը գայլը կուրախանայ։Գայլի գլխին աւետարան էին կարդում, ասում էր. շուտ արէք, ոչխարը սարն անց կացաւ։—Աղուէսի դունչը խաղողին չը հասաւ, ասաց խակ է։—Արջը իր ահից կը գոռայ։—Կատուին խաղէ, միանը մահ է։—

Աղուէսը և ճագարը։

Աղուէսը ճագարին ասաց. "Ճագար, ինչի ես այդպիսի խոր փոսեր փորում"։— Նորա համար, որ դու, աղուէս եղբայր, ինձ մօտ հիւր չը գաս, պատասխանեց ճագարը։

Գառը և իւր մայրը։

„Ինչի կուլաս դու, գառնիկ։"
— Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ։

"Ո՞վ ծեծեց քեզ, գառնիկ։"
— Մէկ ծեր չար կախարդ կնիկ։
"Ինչի ծեծեց քեզ, գառնիկ։"
— Ծառին տակն էի, մայրիկ։
„Ո՞րտեղով զարկեց քեզ, գառնիկ։"
— Ոտիկներուս, իմ մայրիկ։
„Ինչպէս լացիր դուն, գառնիկ։"
— Մէ, մէ, մէ, իմ մայրիկ։

№ 10 Ընտանի, վայրենի և երգող թռչուններ։

Ընտանի թռչուններ. հաւեր, բադեր, սագեր, հնդուհաւեր, աղաւնիներ։

Երգող թռչուններ. սոխակներ, դեղձանիկներ, արտուտներ, սարեակներ, ծիծեռնակներ, կկուներ։

Վայրենի թռչուններ. արծիւներ, ցիներ, բազէներ, անգղներ, բուեր։

Արծիւներ. Սոխակներ. Հնդուհաւեր. Բադեր. Հաներ. Կոյներ. Սարեակներ. Գոռնիներ. Ցիներ. Ծիծեռնակներ. Դեղձանիներ. Հոլեներ։

Ծիծեռնակ։

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Քո հայրն ինչ է, քո մայրն ինչ է,
Բաշխուլ հաւի աչերն ինչ է։

Ագռաւը Բուին։

„ Ինչ ես նստում ամբողջ գիշեր,
Ու վայ տալիս գլուխդ 'ի վեր։ „
— „ Ես քո գլուխդ եմ լաց լինում,
Որ իմ բախտին ես հանդիպել։ „

Ելնեմ ծառը զարդարեմ,
Վեր գամ տակը մխթարեմ,
Հաւի վառիկը մորթեմ,
Տանեմ գետը՝ լուանամ,
Եփեմ, ու չոբանին տամ,
Չոբանն ինձ մէկ ոչխար տայ,
Ոչխարին Աստուծուն տամ,
Աստուած ինձ մէկ եղբայր տայ։
Եղբայր, եղբայր, Ջան եղբայր,
Ջանս քեզ մատաղ, եղբայր
Կաբայ եմ կարել, կարմ եկել,
Բուզմայ եմ շարել, խոչ եկել,
Ճնճուղի լեզուն մեղրով
Քեզ համար եմ տապակել։

Երկու աքաղաղ։

Երկու աքաղաղ կռվեցին և մինը յաղթեց միւսին։ Յաղթվողը փախաւ, մնաւ սրահի տակ. իսկ յաղթողը բարձրացաւ կտուրը և բարձր ձայնով կանչեց. „ Ծուղրուղու։ „ Յանկարծ ցին, որտեղից որ էր, վայ տուեց, թռցրեց մեր երդողին և տարաւ, անուշ արաւ։



№ 11 Ձկեր, Սողուններ և Զեռուններ։

Ձկներ. կարմրախայտ, գեղարքունի, տառեխ, իշխան, կողակ։

Սողուններ. օձեր, մողեսներ, դորտեր։

Զեռուններ. ճանճեր, մոծակներ, մեղուներ կրէտներ, բոռեր, ճիճաճանճեր, մրջիւններ, բզեզներ, լուեր, թիթեռներ, ծղրիդներ, ճճիներ, մլակներ, մորեխներ։

Տառեխներ. Օձեր. Ճանճեր. Մոծակներ. Մոզեններ. Մորեխներ. Թիթեռներ. Գեղարքունիներ. Գլխարկներ. Լուներ. Բզեզներ. Սոխակներ. Գորտեր. Ձիաճանճեր. Ծղրիդներ. Արծիւներ. Կարմրախայտներ. Մեղուներ. Անդղներ. Մրջիւններ. Ծիծեռնակներ. Խլուրդներ. Պախրաներ. Բրզանեներ Տանձեր. Կողակներ:

Ձուկը գլխիցը կը հոտի։-Ձուկը ջրումը դին չեն դընել։-Օձը առաջ սաքացնողին կը կծի։

Ուլերը և գայլը։

Լինում է, չի լինում մի այծ։ Այս այծը իւր համար անտառումը մի տուն է շինում և իւր փոքրիկ ուլերով նորա մէջ բնակվում։ Ամեն օր, հանդը գնալիս, նա պատուիրելիս է լինում իւր ուլերին, որ ոչոքի համար դուռը բաց չանեն. ինքն էլ հանդումը կանաչ խոտերի մէջ արածելուց յետոյ, երեկոյանները յետ դառնալիս է լինում տուն և իւր երկար, կեռ պողերով դրանը խփելիս ու ասելիս.

Իմ ուլիկներ, փոքր այծուկներ,
Դէհ շարժ եկէք, դուռը բացէք,
Ձեր մայրն կանաչ դաշտից եկաւ,
Աբրեշումէ խոտն արածած,
Սառն աղբիւրի ջուրը խմած,
Կուրծը լիքը ձեզի համար,
Կաթնէ բերում իւր ծծերում.
Բացէք, բացէք, ձեզ եմ ասում։

Ուլերը լսելով իրանց մօր ձայնը, վազում են ու դուռը բաց անում։ Մայրը ծծեցնում է նորանց և կրկին գնում է արածելու։

Գայլը լսում է այծին այս խօսքերն ասելիս, և երբ որ նա դուրս է գնում արածելու, մօտենում է այծի փարախին և սկսում է երգել հաստ ու կոպիտ ձայնով.

Իմ ուլիկներ, փոքր այծուկներ,
Դէհ շարժ եկէք, դուռը բացէք,
Ձեր մայրն եկաւ, կաթը բերաւ։

Ուլերը ականջ են դնում և ասում են. “Լսում ենք, լսում, այդ մեր մօր ձայնը չէ. մեր մայրը բարակ ձայնով և քաղցրը է մկկում, ասում են ու դուռը չեն բացանում։ Գայլը՝ սոխածութիւնից ատամները կրճատացնելով, թողնում է ու գնում։ Մի փոքր ժամանակից յետոյ մայրը գալիս է. նա գովում է իւր ձագերին, որ իւր խօսքը լսել են և դուռը չեն բացարել։” Դուք շատ լաւ էք արել, որդիք, որ դուռը չէք բաց արել, թէ չէ, նա ձեզ ամենիդ էլ կուտէր”։

№ 12 Սունկեր, խոտեր և ծաղիկներ։

Սունկեր. Կարմրասոկոն, ոչխարասոկոն, անտառասոկոն

Խոտեր. Անանուխ, օշինդր, թրթընջուկ, աւելուկ, փիփերթ,

Պարտէզի ծաղիկներ. վարդ, մեխակ, շուշան, կակաչ, ռեհան։

Դաշտի և անտառի ծաղիկներ. մանու-

շակ, Նարգէս. Խլոպուզ, Շուշան, Ձնծաղիկ, պուտ, Լուսծաղիկ։

Մանուշակ. Կարմրասոկոն. Մեխակ. Ռեհան. Նարգէս. Վարդ. Շուշան. Ոչխարասոկոն. Եղինջ. Երեքթեւուկ. Անանուխ. Ճանճ. Լուսծաղիկ. Կակաչ. Կաթ. Կացին. Օշինդր. Սագ. Թրթնջուկ. Բզէզ. Մակոյկ. Ձնծաղիկ։

Վրանց պուտը կարմիր չկայ, որ ձղես սիրտը սև է։— Մի ծաղկով գարունք չի լինիլ։—Մի ծաղկից օձը թոյն է շինում, ճանճը մեղր։

Հանելուկ. Սեղ մինն ունենք մի ոտանի, որ դուրս կըգայ, գայլ կըտանի։

Խլոպուզը սխալվում է,
Ձնծաղիկն էլ սուտ է ասում.
Գարնան սիրուն օրինակը
Փունջ մանուշակն է մեզ բերում։

Այն իչ ծաղիկ է *

Գարունքը դաշտումը տեսայ մի ծաղիկ,
Կանաչ թերթիկ ունէր և կապույտ աչիկ.
Խոտերի միջ հաղիւ նա տեսնվում էր,
Թէև համեստ ծաղկած, սիրուն հոտ ունէր։

Ճաթը և նապաստակը։

Մի թուրք ճանապարհ էր գնում։ Սովածությունից նորա փորը վեց վեց էր անում։ Խեղճը հանեց իւր պարկից մի կտոր ճաթ, որ քարից էլ պինդ էր, և երբ որ տե-

սաւ, թէ չի կարողանում ուտել, փընթ-փընթալով դէն գըցեց նորան։ Որտեղից որ էր, այն բոպէին մի նապաստակ անցնում էր այն տեղով. ճաթի կտորը պատահմամբ նորան դիպաւ և վեր գցեց։ Թուրքը ուրախ ուրախ վազեց, բռնեց նապաստակը, մորթեց և ճաթի կտորը համբուրելով ասաց.

Շնորհակալեմ, իմ ճաթիկ,
Որ ինձ համար անուշիկ,
Պատրաստեցիր կերակրիկ։
Հիմայ չախմախս կըզարկեմ,
Շուտ թէժ կրակ կը վառեմ
Քո ինձ տուած կերակրից
Համեղ պատառ կըխորվեմ.
Քեզ կրծելուց կազատվեմ։



№ 13 հացհատիկներ, պարտէզի բոյսեր և պտուղներ։

Հացհատիկներ. Հաճար, ցորեն, գարի վարսակ, կորեկ, սլուպ։

Պարտէզի բոյսեր. կարտոֆիլ, շաղգամ, կաղամբ, լոբի, սիսեռ, գաղար, ոսպ, բողկ, սոխ, կանեփ, ճակընդեղ։

Պտուղներ. մոբի, կոծոխուր, մոր, տանձ, խնձոր,

կեռաս, դեղձ, ծիրան, ընկոյզ, զկեռ, թուզը, թութը, դամբուլ, սալոր։

Ցորեն. Գարի. Ոսպ. Մորի. Հաճար. Թիակ. Վարսակ. Լոբի Արագիլ. Կորեկ. Սիսեռ. Կոճոխուր. Գազար. Գաղամբ. Կեռաս. Սլուպ. Հաց. Կարտոփիլ. Թուզ. Սալոր. Շաղկամ. Ընկոյզ. Պանիր. Գրատախտակ. Կաչաղակ. Կանեփ. Տանձ. Սոխ. Բոխակ. Տուն. Ծիրան. Ճակնդեղ։

Սոխ ու հաց, սիրտը բաց։ Թուզը գարի կը ծծելով կ'սատկի։-Թուզը կորեկ չէր ճարում, ցորենին էր էրնակ տալի։

Ցորեն և գարի։

Գարին ցորենին ասաց. «արի գնանք այնտեղ, ուր ոսկի է դուրս գալիս. այնտեղ մենք կարող ենք ազատ զբոսնուլ։» Ցորենը գարուն պատասխանեց.» Գարի եղբայր, ելևռւմ է, որ քիստդ երկար է, իսկ խէլքդ կարճ. ինչի համար մենք քաշ գանք ոսկու յետևից. նա ինքը մեզ մոտ կը գայ։„

Որոմն։

« Ինչքան քիչ է այս տարի հաճարի մէջ որոմն, աստուծ էին երեխանէրն։ » Ինչպէս անեմ, որ բոլորովին կորուի այդ որոմը մնացում էր հայրը։

№ 14 Պտղատու և անպտուղ ծառեր և թուփեր։

Պ տ ղ ա տ ու ծ ա ռ ե ր. խնձորի, տանձի, կեռասի, (բալի) սզնի, հունի։

Ա ս ա ր ա կ ծ ա ռ ե ր. հացի, թխկի, լորենի, հաճարի, բոխի, կաղնի, սօսենի, ուռի. ճապկի, բարտի։

Թ փ ե ր. Ալոճի, զկռի, մասրի, մամխի, կոճոխուրի, մորենի։

Ալոճի. Տանձի. Սօսենի. Մասրի. Մորի. Խնձորի. Մորենի. կաղնի. ճնճղուկ. Լորենի. Զկռի, Հաճարի. Հաճար. Հուն. Հունի. Կոճոխուր. Ուռի. Սզնի. Կաղնի. Մամխի. Մասուր. Հացի. Ճապկի. Բարտի։

Ծառը իրան պաղից կը ճանաչուի։ Ուռը առուի մոտ կը կանաչի։-Պաղատու ծառը ճղները կախ կը գցի։-Տզզանին (*) հարցրին, անունդ ինչ է, ասաց խնձոր։—

Կաղնի ծառը և մասրի թփերը։

Ընտառի մոտ կաղնի ծառը բարձրացել էր և շատ ճղներ էր տուել։ Նորա արմատի մոտ դուրս էին եկել շատ մասրի թփեր։ Մի օր կաղնի ծառը գլուխը շարժեց և ասաց այդ թփերին. «Ինչ անպէտք և թոյլ բաներ էք. ամեն երեխայ կարող է ձեզ կտրել. ոչինչ բանի պէտք չէք. ի զուր տեղը փաթաթուել էք արմատով և ոտներս խըճրճում էք։ Երանի ինձ, որ այսչափ մեծ եմ և զօրեղ, և շատ հարիւր տարի ապրելով, տեսնում եմ, թէ ինչպէս կըտրատում են ձեզ գիւղացի մանուկները։ Երանի թէ նոքա շուտով ազատէին իմ արմատը ձեզպէս չնչին ծառաներից։

Այս որ ասաց, մէկ էլ տեսնես մի սաստիկ փոթորիկ բարձրացաւ, այնպէս սաստիկ քամի, որ բոլոր մասրի թփերը կոտրան, գետնիցը կպան։ Հաստարմատ կաղնի ծառը

սկսեց քամու առաջ օրօրուիլ. նորա արմատները ճըռճըռացին, տրաք—տրաքեցին և հպարտ կաղնին իւր բարձրութիւնից ցած գործանուեցաւ և պարծենկոտ գլուխը կըտոր կտոր եղաւ։ Քամին անցկացաւ և մասրի թփերը նորից իրանց գլխները բարձրացրին։

№ 15 Մետալներ, հասարակ և թանկագին հողեր։

Թանգակին մետալներ. ոսկի, արծաթ։

Հասարակ մետալներ. երկաթ, պղինձ, կըլեկ, արճիճ, մնդիկ։

Թանգագին քարեր. անդամանդ, գոհար, յակինթ, զմրուխտ։

Հասարակ քարեր. կայծաքար, որձաքար, սալաքար, շերթաքար, աւազաքար։

Հողեր. կաւ, կիր, սեհող, աւազահող, շէկհող, տորֆ, կաւիճ, գաճ։

Անդամանդ. Շերթաքար. Կաղնի. Արճիճ. Զմրուխտ. Կաւ. Երկաթ. Դանակ. Ոսկի Սեհող. Բուրղու. Արծաթ. Մուրճ. Աւազաքար. Սայլակ. Սալաքար. Տորֆ. Շէկհող. Պողպատ. Սեղան։

Սատիկ անձրև էր գալիս. կոշտը իրան թողել էր, հողի գլուխն էր լալիս։

Փոքրիկ գառը։

Մէկ փոքրիկ գառ՝ ձիւնի նման մաքուր, սպիտակ, գնաց մի օր մոր հետ դաշտը, որ արածի։

Եւ իւր կամքին սկսեց թռչել քարերի տակն,
Չէր ուզում՝ որ փոքր միջոց հանդիստ նստի։
Դարիվեր դարիդուս չափէր դցում անզգուշութեամբ։
Թէ քար թէ փայտ, թէ խոտ, թէ ձոր՝ բնաւ չէր նայում։
Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նորա մայրը,
Զգոյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը։
Բայց գառնուկը հենց թռչում էր, խայտում խաղում,
Եւ դարիվեր ու դարիդուս միշտ վազվզում։
Վերջն, երբ գառը իւր մոր խօսքին ականջ չարաւ,
Սարի գլխին իւր գժութեան պատիժն առաւ։
Մի մեծ քար կար այնտեղ ընկած որի վրայով
Մեր գառնուկը խաղ էր անում ծուլ լինելով.
Մէկ էլ տեսնես՝ ոտի մէկը տակովն եկաւ,
Քսան տեղից կտոր կտոր փշրուեցաւ։

Մեծի ասած փոքրի լսած։-Ասողն էլ լսող պիտի։

№ 16 Մարդիկ, կենդանիներ, բոյսեր և հանքեր։

Մարդիկ. հայր, մայր, եղբայր, քոյր, ծերունի, մանուկ, պառաւ, մարդ, կին, վաճառական, աղքատ։

Կենդանիներ. գազաններ, թռչուններ, սողուններ միջատներ, խեցգետիններ, սարդեր։

Բոյսեր. ծառեր, թփեր, հացհատիկներ, խոտեր, ծաղիկներ, սունկեր, մամուռներ։

Հանքեր. մետաղներ, քարեր, հողեր, աղեր։

Աղքատ, թուլ. թռչուն. գիրք. ոստայն. կիր. երկաթ. մանուկ. եղբայր. ծառ. մամուռ. սունկ. գազան. ծիրանի. խոտ. պառաւ. աղ. քար. ծաղիկ. օրիորդ. մեռաղ. սեղան. հող. միջատ։

Ինչ չի ծնում, նա չի մեռնում։—Ապրիլ կայ երկաթ է, տպրիլ կայ արծաթ է։—Երկաթը տաք տաք կը ծեծեն։

Հանելուկ. Առաւօտեան չորս ոտի վերայ է մանդալիս, ճաշին երկու, երեկոյեան երեք։

Արջի թաթը։

Գիւղացիք թալակ սարեցին և մի արջ բռնեցին։— Արջին սպանելով չըսպանեցին, միայն կացնով նորա թաթը կտրեցին։ Երեք ոտնանի արջն էլ կաղի տալով փախաւ, գընաց։ Մի խեղճ պառաւ խընդրեց, որ արջի թաթը իրան տան. խուզեց նորա վերայի մազը և կաշին էլ մաշկեց։ Պառաւը միսը կրակին դրեց եփելու, ինքնէլ նստեց կաշուի վերայ և ընկրսեց մանել նորա մազը։ Մանեց, մանեց մինչև կէս գիշերը։ Կէս գիշերին մէկ էլ տեսնես մի ձայն է լսվում. մի բան լուսամուտի տակ թրմփ-թրմփացնում, չըզկ-չըզկացնում է։

Պառաւը լուսամուտից դուրս մտիկ տուեց և վախից քար դառաւ. տեսնում է, որ երեքոտանի արջը, փայտի վերայ դիմհար տալով բարձրանում է և մրընթմրընթում.

Դէհ բարձրանամ բարձրանամ,
Լորենի ոտի օգնութեամբ,
Հունի փայտի օգնութեանը։
Արարած աշխարհ քնել է,
Ջուրն էլ վաղուց դադարել է.
Ամեն մարդ քնած է շէնում,
Ամեն մարդ քնած է գիւղում։
Միայն պառաւը չէ քնում։
Իմ կաշիս իւր տակը դցած,
Իմ բրդից նա թել է մանում,
Իմ մսից նա կերակուր եփում։

Պառաւը շատ վախեցաւ, որովհետև նա կենում էր մեն-մենակ գիւղի մի ծայրումը։ Ինչ անի, ինչ չանի, արջից ինչպէս ազատվի։ Արջը քիչ էր մնացել, որ ներս մտնի. նա արդէն ձեռնափայտով թրխկ-թրխկացնում էր։ Պառաւը թոնրի բերանը բաց արեց ու ինքը բարձրացաւ ամբարի գլուխը։ Արջը տրփտրփելով դուռը գտաւ, կրընկահան արեց, ներս մտաւ խրճթի մէջ և սկսեց մթնումը պրտոյտ պրտոյտ անել. մին էլ տեսնես-թրրմփ-ընկաւ թոնրանը։

Պառաւը շտապով թռաւ ամբարի գլխից, ծածկեց թոնրի բերանը և գնաց հարևաններին կանչեց։ Հարևանները եկան ու արջին սպանեցին։

№ 17 Օրուայ մասերը. շաբաթուայ օրերը և տարուայ եղանակները։

Օրուայ մասերը. ցերեկ, գիշեր, առաւօտ, երեկոյ, կէսօր, կէս գիշեր։

Շաբաթուայ օրերը. կիւրակի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ։

Տարուայ եղանակները. գարուն, ամառ աշուն, ձմեռ։

Գիշեր. Բու. Ամառ. Հաճար. Չորեքշաբթի. Աշուն. Խնձոր. Ուրբաթ. Ծիծեռնակ. Մանուշակ. Հինգշաբթի. Գարուն. Շաղիկ. Երեքշաբթի. Ձմեռ. Սահնակ. Մանուկ. Առաւօտ. Երկուշաբթի. Ցերեկ. Գիր. Գունտ. Կէս գիշեր. Աքաղաղ. Կիւրակի. Եկեղեցի. Շաբաթ։

Մուկը, աքաղաղը, արջը և եզը։

Մուկը մաքումը դրեց՝ որ գողութիւն անէ, ու ճանապարհ ընկաւ։ Ճանապարհին Նորան մի աքաղաղ պատահեցաւ և հարցրեց. « Մուկը եղբայր, ուր ես գնում։—

— «Գնում եմ գողութիւն անելու։»

— «Ինձ էլ հետդ տար։»

— «Մէկ չըլինինք, երկու լինինք, դու էլ հետս արի։»— Եւ մուկն ու աքաղաղը առաջ գնացին։ Նորանց պատահեցաւ մի արջ և ասաց։ «Մուկը եղբայր, ուրեք գնում։»

— «Գնում ենք ընկոյզ գողանալու», պատասխանեց մուկը։

— »Երկու չըլինինք,երեք լինինք, ինձ էլ հետներդ տարէք։

Եւ մուկը, աքաղաղը ու արջը միասին գնացին։ —Դաշտումն անց կենալիս տեսան մի եզը, որ կանաչ խոտումը արածում էր։ Բարի աջողումն, եզը եղբայր, մենք գնում ենք ընկոյզ գողանալու, դու էլ հետներս արի։ Եզը համաձայնեցաւ և հետները գնաց։ Գնացին, գնացին, շատն ու քիչն Աստուած գիտէ, և հասան մի գիւղի մօտ։

— «Ես գիւղից հեռու կըկանգնեմ, ասաց արջը, որովհետև ընկուզատիրոջ բոլոր շները ինձ հետ թշնամի են. իսկ դուք տանու էք, ձեզ վերայ ոչ ոք չի կասկածիլ, շներն էլ կըկաբուին ձեզանից. ուրեմն դուք գնացէք, պարկերը նըկուզով լցրէք, եզանը բեռնեցէք, և բերէք։»

Եզը, աքաղաղը և մուկը գնացին, և մթնով հասան գիւղացու տունը։ Եզը դրանը կանգնեց, իսկ աքաղաղը և մուկը ներս մտան տուն. աքաղաղը վառարանի մոխրումը թախկացաւ, իսկ մուկը սկսեց ընկուզի ամբարը ծակել։ Բայց գիւղացին չըխկչըխկոցն խմացաւ և վերկացաւ տեսնելու, թէ ով կայ։ Նա գնաց վառարանի մօտ ճրագ վառելու, բայց՝ մէկէլ տեսնես, աքաղաղը իւր թևերը թափթափ տուեց և խեղճ գիւղացու աչքերը մոխրով լցրեց։

Մինչև որ գիւղացին աչքերը կըտրորէր, աքաքաղաղն ու մուկը պարկը լցրին, եզը բեռնեցին, փախան, գնացին։

Երբ որ գիւղացը փոքր ինչ հեռացան և արածելու դաշտին մօտեցան, արջը ձայն տուեց. «կացէք բարեկամք, այս խղճուկ եզը մեզ շատ ծառայեց, պէտք է որ թողնենք, գնայ՝ իւր համար հանգիստ արածէ. սա մեզ էլ պէտք չէ։ Ասաց արջ եղբայրն ու եզան միջքից պարկը վեր առաւ, իւր ուսին դրեց։ Ցետոյ յետ դարձաւ և սաստիկ ձայնով

միանեարին ասաց։ « Դուք, անպիտաններ, ինչպէս կարացաք գիւղի մէջ մտնել, գողութիւն անել։ կորէք աչքիցս, եթէ չէք ուզում իմ լայն թաթերիս ծանրութիւնն փորձել։ Ասաց ու առաւ, պարկը լեք ընկոյզը իւր համար տարաւ։

№ 18 Գարնանային, ամարնային, աշնանային և ձմեռնային ամիսները։

Հոկտեմբեր. Մայիս. Օգոստոս. Յունվար. Նոյեմբեր. Յունիս. Դեկտեմբեր. Յուլիս. Մարտ. Սեպտեմբեր. Փետրվար. Ապրիլ։

Մայիսին։

Երբ մայիսին ես անցնում եմ անտառով,
Գեղեցկագոյն թռչուններ շատ եմ տեսնում։
Ամեն մէկը ուրախութեամբ երգելով,
Աշխատում է տաք բուն շինել թփերում։
Երբ անցնում եմ ես ծաղկապատ դաշտերով,
Շատ թիթեռներ և բզեզներ եմ տեսնում,
Սև ու սպիտակ և հաղար մի գոյներով.
Ծաղկից ծաղիկ թռչոտում են, ծրլվըլում։
Էլ շատ սիրուն, շատ գեղեցիկ է դաշտը,
Որի վերայ ոչխար, տավար և այծեր,
Ամեն կողմից բառաչում են ու մայում,
Եւ ինձ իրանց քաղցր ձայնով գրաւում։

Հոկտեմբերին։

Երևն իւր ոյժը կորցրած,
Ամպերի տակ ծածկուեցաւ,
Սաստիկ քամին ողջ ծառերի
Տերևները վեր ածաւ։

Շատ թռչուններ անյայտացան
Եւ թիթեռներ դաշտերից.
Ծառը չունի կանաչ տերև,
Նա զրկվում է իւր զարդից։
Երկնքումը ամպի քուլէքն
Անձրևներ են պատրաստում
Անտառն իւր տերևներով՝
Առուն տխուր քչքչում։
Ինչի՞ սողուններ դաշտերի
Եւ վայրենի թռչուններ,
Շտապում են իրանց համար
Մի ապահով տեղ գտնել։

№ 19 Ժամանակի, երկայնութեան և ծանրութեան չափերը։

Ժամ. Արշին. Վայրկեան. Սաժէն. Քառորդ. Մսխալ, Տարի. Գրվանքայ, Ամիս. Վերստ. Մղոն. Շաբաթ. Փութ. Բոպէ. Վերշոկ. Դար. Օր. Հազար տարի։

Լաս օրուայ բանը էքուց մի գցիր։—Էս օրուայ փուշը, էգուցուայ նուշը։—Վեց օր գործեի՛ր, եօթերորդ օրը հանգըստացիր։

Ծոյը և ջանասէրը։

Այսօր խաղամ, վաղը կըսովորեմ, ասում է ծոյը։—Վաղը կըխաղամ, այսօր սովորեմ, ասում է ջանասէրը։

Օձը առաջ իւր տաքացնողին կը կծի։

Գիւղացին տեսաւ մէկ օձ, որ ցրտիցը սառել էր. վերկալաւ, տաքացրեց։ Օձը տաքացաւ թէ չէ, յարձակուեցաւ գիւղացու վերայ և կամենում էր կծել նորան։ Գիւղացին ասաց. «Ա՛յ օձ, ես քեզ տաքացրի, մեռնելուց ազատեցի որ ինձ կծես։ Օձը պատասխան տուեց. « Աստուած մեզ միայն կծելու շնորք է տուել. մենք աւելի պէտք է մարդկանց կծենք, եթէ նորանք մեզ ազատած էլ լինին, որովհետև մարդու պէս ապերախտ արարած չկայ աշխարհումս։» Գիւղացին ասաց.«Ա՛յ օձ, արի, ինձ մի կծիր, քո ձեռքովդ իմ դատաստանս մի կորիր, թող կանչենք երեք դատաւոր և նորանք մեր դատաստանը անեն։ Օձը համաձայնեցաւ։ Կանչեցին մէկ պառաւ ձի։ Ձին ասաց.« Մարդը ամենից ապերախտն է աշխարհիս երեսին. ես նորան քանի քանի տարի է ծառայում եմ, նորա կեանքը պատերազմների մէջ ազատել եմ, նորան մինչև այսօր շալակած մանեմ ածել և հիմայ, որ ծերացել եմ, էլ երեսիս չէ մոռիկ տալիս և կամենում է ինձ մորթել տալ, որ կաշիս ծախի։»

Յետոյ կանչեցին մէկ ծեր գոմէշ։ Գոմէշն ասաց. «Մարդու պէս ապերախտ արարած չեմ տեսել աշխարհումս։— Քանի որ ես փոքր էի և ուժով, նա ինձ լծեց իւր սայլերում, արօրում, ցաքանում, և ամեն կերպով ծառայեցրեց ինձ. հիմա՝ երբ մի փոքր ծերացել եմ, կամենում է ինձ մորթել, իմ միսը ուտել և կաշուիցս իւր համար տրեխներ շինել»։

Գիւղացու բանը վատ էր։ Մի դատաւորն էր մնացել։ Կանչեցին աղուէսին։ Աղուէսը՝ տեսնելով թէ բանը ինչ տեղն

է հասել՝ փըսփսաց գիւղացու ականջումը. « Եթէ ինձ մի չաղ հաւ կըխոստանաս քո հաւարունից, ես քեզ կազատեմ։ Մարդը գլխով արեց։ Աղուէսը այսպէս սկսեց խօսել. » Օձ եղբայր, ես ամենից առաջ մի բանի վերայ շատ եմ զարմանում, թէ դու ինչպէս ես տեղաւորվում այս ծակի մէջ. չէ, ես չեմ հաւատում, այս քո բունը չըպէտքէ լինի, խընդրեմ՝ մի փորձի համար ներս սողա՛ սորա մէջ՝ տեսնեմ։ Օձը ներս սողաց բունի մէջ։ Խորամանկ աղուէսը նորա բնի բերանը մեծ քարով ծածկեց և խեղճ գիւղացուն օձից ազատեց։

Միւս օրը առաւօտեան գնաց աղուէսը գիւղացու տունը հաւը ստանալու։ Գիւղացին քնած էր։ Նորա ծառաները սաստիկ թակեցին խեղճ աղուէսին և ճանապարհ դրցեցին։ Այն ժամանակ աղուէսը թափտալով իւր պոչը՝ ասաց. « Ճշմարիտ, որ մարդը շատ ապերախտ է եղել։»



№ 20 Տների, սայլերի, անիւների, բոյսերի և կենդանիների մասերը.

Կտուր. Անիւ. Բուն. Գունդ. Ոտ. Ճաղ. Թև. Գլուխ. Արմատ. Պոչ. Սռնակ. Ափ. Սմբակ. Տերև. Փեղկ. Պատ. Այգի. Հիմք. Բուն. Ճիւղ. Ներքնատուն. Կնճիթ։

Գլուխը բարձը բռնողի ոտը քարին կզիպչի։ — Ծառն արմատից կըշրանայ—Պողատու ծառը գլուխը կախ կը պահի։

Ա ն ա ն ա ն ա ։ Էստեղից մինչև Երևան, մանր մանր քըրեղան։

Սուրբ Սարգսի երգ։

Ալէլուիա, ալէլուիա,
Հրէս եկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,
Աջու ձեռին աւետարան,
Ձախու ձեռին սաղմոսարան,
Աջով գրէր՝ ձախով ջնջէր,
Ձախով գրէր՝ աջով ջնջէր,
Բարեկամ, երեխայիդ անունն ինչ է։ (1)։
Ձեր ցակոբը թախտին նստի,
Փափուկ ձեռքը ջէրը տանի,
Հինգ աբասին ջէրից հանի,
Սուրբ Սարգսին մատաղ անի։

Ամառը բոյս է, իսկ խիճը քար է։—Բաղէն թռչուն է, իսկ թռչունը կենդանի է։—Ժամը ժամանակի չափ է, իսկ աշունը երկայնութեան։—Ցունվարը ձմերային ամիս է, իսկ մայիսը . . . —Կատուն չորքոտանի կենդանի է, իսկ ծըղրիդը . . . —Անանուխը խոտ է իսկ խոռը . . . —Անիւը

(*) Ցակոբ է կամ մի այլ ինչ։

սայլակի մասն է, իսկ թիւը . . . . —Բերանը կենդանու մասն է, իսկ արմատը . . . . ։

№21 Մարդու մարմնի, ձեռների և ոտների մասերը։

Ծունկը. Գլուխ. Բուն. Դաստակ. Ուս. Արմունկ. Փոր. Ձեռք. Ոտ. Պարանոց. Սրունք. Աչք. Գարշապար. Կուրծք։

Ատուած ձեռք է տուել բան շինելու համա։—Հացն ուտելով, բանն անելով։—Բանի անունը տալիս, գլխի ցաւը բռնում է։—Ծոյլ մարդու ձեռները միշտ փաւ են ուտում։

Մորենին թուփ է, իսկ կաղնին . . . . —Ոչխարասոկոնը սունկ է, իսկ սունկը . . . . —Ոսկին թանկագին մետալ է. իսկ երկաթը . . . . —Երկուշաբթին շաբաթուայ առաջին օրն է, իսկ ուրբաթն . . . . —Գարշապարը ոտի մասն է, իսկ դաստակը . . . . —Դաստակը ձեռքի մասն է, իսկ ձեռքը . . . . ։ —Փորքաշը սալք է, իսկ բաշը . . . —Ոչխարը ընտանի կենդանի է, իսկ աղուէսը . . . . —Զաղալը լեշակեր կենդանի է, իսկ ճագարը . . . ։

Թռչնակ

Մեր տան մօտը, ծառի վերայ
Ճնճղուկն մեծ հոգսի մէջ է.
Նա կտուցով խոտ է բերում,
Մաղ ու ձղեկ, բուրդ հաւաքում,
Իւր ձագերին տաք բուն շինում։

Երեգակը որ դուրս եկաւ,
ճնճղուկն իրան գործն սկսեց,
Մինչև արևն մայր մտնելն,
Եւ գործ տեսաւ նա և՛ երգեց։

Երբ որ գիշերն մօտեցաւ,
Սիրուն Թռչունն սուս կացաւ,
Եւ գլուխն թևերի տակ,
Մինչև 'ի լոյս, քնեցաւ։

Հենց լուսացաւ, ծէգը բացուեց,
Սիրուն ճնճղուկը նորից զարդեց,
Անուշ ծայնով, քաղցր կերպով,
Իւր երգի տուտը սոսեց։

№22. Գլխի, դէմքի, գարշապարի և դաստակի մասերը

Աչք. Ծոծրակ. Քիթ. Այտ. Բերան. Պատուանդան. Ափ. Կրունկ. Դէմք Մատ. Կզակ. Թուշ. Գագաթ. Ճակատ։

Ուսը ձեռի մասն է, իսկ ձեռը . . . . Կրունկը գարշապարի մասն է, իսկ գարշապարը . . . .—Կտուրը տան մասն է, իսկ տունը . . . . (շինութիւն է —Գմբէթը եկեղեցու մասն է, իսկ եկեղեցին . . . . —Արմունկը ձեռքի մասն է, իսկ ձունկը . . . . —Սոնին սայլի մասն է, իսկ սայլը ինչ է . . . . —Գայլը վայրենի գազան է. իսկ արծիւը . . . . —Մէջքը բնի մասն է, իսկ գագաթը . . . —Դեկտեմբերը ձմեռային ամիս է, իսկ Հոկտեմբերը . . ։

Աքաղաղը և կատուն։

Կատուն ու աքաղաղը բարեկամացան, և շատ սիրում էին միմեանց։ Կատուն ամենայն օր գնում էր անտառը որս անելու, իսկ աքաղաղին պատուիրում էր, որ տանը նստի, դռները չբացանի. և լուսամուտից դուրս չընայի. եթէ ոչ գող աղուէսը կըգայ՝ նորան կըտանի։ Կատուն գնում է անտառը թէ չէ, աղուէսը, մէկ էլ տեսնես, մօտ է վազում լուսամուտին և սկսում է երգել։

Ծու-ղրու-ղու, իմ աքլոր,
Ոսկէ փետուր թագաւոր,
Գլուխդ իւղով օծած,
Միրուքդ մետաքսից հիւսած,
Լուսամուտից դուրս նայիր,
Իմ բերած կուսն վայելիր։

Աքաղաղը կամեցաւ տեսնել, թէ ով է այս քաղցր երգիչը, լուսամուտից գլուխը հանեց թէ չէ, աղուէս եղբայրը վերայ թռաւ, խեղճին բռնեց ու տարաւ, Աքաղաղը սկսեց դուչել.

Վայ աղուէսն ինձ տարաւ
Ու անծանօթ կողմերը։
Դէպի մութ անտառները,
Կատու եղբայր շատ հասիր
Դեպի բարձր սարերը,
Ինձ սրանից ազատիր։

Կատուն լսեց աքաղաղի ձայնը, վազեց, աղուէսին հասաւ, իւր աղբօրը ազատեց ու տուն դարձրեց։ «Մտիկ տուր, եղբայր, ասաց կատուն, վաղը ես աւելի հեռու սէտք է գնամ, աղուէսին չըլսես, թէ չէ, աղուէսը քեզ այնպէս կուտի, որ ոսկորդ էլ չի մնալ։

Կատուն թողեց, հեռացաւ. աղուէսն էլի մօտ վազեց, իւր սիրուն երգն սկսեց։

Ծուղ-ղու-ղու, իմ աքլոր,
Ոսկէ փետուր թագաւոր,
Գլուխդ իւղով օծած,
Միրուքդ մետաքսից հիւսած,
Լուսամուտից դուրս նայիր,
Քեզ համար բերած կուտը,
Ցորնի լեքը հատիկը,
Հանգիստ կեր ու վայելիր։

Շատ դիմացաւ աքաղաղը և դուրս չընայեց, թէև ցանկանում էր տեսնել, թէ ինչպիսի հատիկներ ունի աղուէսը։ Աղուէսը տեսաւ որ աքաղաղը դուրս չի նայում, սկսեց նորից երգել։

Ծուղ-ղու-ղու, իմ աքլոր,
Ոսկէփետուր թագաւոր,
Գլուխդ իւղով օծած,
Միրուքդ մետաքսից հիւսած,
Լուսամուտից դուրս նայիր,
Ցէս, մարդիկ են անց կենում,
Բռնով ցորեն են ցրվում,
Ոչ ոք չըկայ՝ հաւաքի։

Ուտի փորը կշտացնի։

Աքաղաղն էլ չըկարողացաւ համբերել. նա անպատճառ կամեցաւ տեսնել, թէ ինչ մարդիկ են անց կենում և ինչպիսի ցորեն են ցրվում, դուրս նայեց. աղուէսը վերայ թռաւ, խեղճին բռնեց ու տարաւ։ Աքաղաղը նորից ըսկըսեց գոռալ.

Վայ աղուէսն ինձ տարաւ
Դէպի մութ անտառները,
Դեպի բարձր սարերը,
Ու անծանօթ կողմերը։
Կատու եղբայր, շուտ հասիր,
Ինձ սրանից ազատիր։

Կատուն հեռու էր, նա հաղիւ լսեց աքաղաղի ձայնը, բայց էլի վազեց, աղուէսին հասաւ, եղբօրն ազատեց, ու տուն դարձրեց։ «Ցէս, եղբայր, էգուց ես աւելի հեռու պետք է գնամ, աղուէսին չըլսես. լուսամուտից դուրս չընայես, թէ չէ, ոլքան բղաւէս, գոռաս, էլ չեմ լսիլ։

Կատուն թողեց, հեռացաւ. աղուէսն էլի մնաց վազեց, իւր սիրուն երգը երգեց։

Ծուղ-ղու-ղու իմ աքլոր,
Ոսկէ փետուր թագաւոր,
Գլուխդ իւղով օծած,
Միրուքդ մետաքսից հիւսած,
Լուսամուտից դուրս նայիր,
Մի չորս կողմդ մտիկ տուր,
Ինչպէս Մարկոսի տանը,
Ուրախութիւն է լինում,
Ինչպէս սիրուն սահնակներ,
Իրանք իրանց են սահում։

Աքաղաղը կամենում է գոնէ աչքի տակով նայել և տեսնել, թէ ինչպէս են սահնակները իրանք իրանց սահում, բայց մտածում է. «ոչ, դուրս չեմ նայիլ, աղուէսը կերթայ, յետոյ կընայեմ»։ Աղուէսը կամենում էր նորից երգել իր սիրուն երգը, բայց աքաղաղը նորան ասաց. ոչ, աղուէս էլ չես խաբիլ ինձ,—էլ դուրս չեմ նայիլ»։—«Ինչ անեմ թէ չես նայիլ», պատասխանեց աղուէսը, կամենում ես նայիր չես կամենում՝ մի նայիր։ Մնաս բարով, ես տուն պէտք է գնամ։»

Հեռացաւ աղուէսը և մի անկիւնում թաք կացաւ. աքաղաղն էլ նորա ձայնը չէր լսում. նա կամեցաւ դուրս նայիլ, թէ արդեօք իսկապէս գնաց աղուէսը, թէ չէ. բայց դուրս նայելուն պէս, աղուէսը վերայ թռաւ, բռնեց խեղճին ու տարաւ։

Շատ ճղլաց, գոչեց աքաղաղը, բայց կատուն չըլսեց նորան. նա արդէն շատ հեռու էր։

№ 23 Աչքի, քթի, և բերանի մասերը։

Լնդերք. Քթածակեր. Ընչացք (բեխեր). Ցօնքեր. Լեզու. Ատամներ. Ծնօտներ. Պռոշներ. Քիմք. Արտաանունք. Ծիածան. Կոկորդ. Բիբ. Սպիտակուց.

Մարմնու ճրագը աչքն է։

Լեզուդ չուանի դիր։—Լեզուի տակին ոսկոր չկայ որ սուտ ասելիս ծակի։—Սուտ ասողի տունը կրակ ընկաւ ոչ ոք չը հաւատաց։—Օձի կծածը կը բաղանայ, լեզուի կծածը չի սաղանալ։

Հանելուկներ. Փոքրիկ պատուհան շեղջով լեր։—Երկու օթախ, մի սիւնանի։—Մէկ տըմբ-տըմբիկ, երկու պըշիկ, մէկ հոտոտիկ. էն ինչ է։

Բիբը աչքի մասն է, իսկ քթածակերը . . . Դաստակը ձեռի մասն է, իսկ դարշապարը . . . —Կոճոլորին թուի է, իսկ թուրիը . . . —Բզեզը միջատ, է իսկ միջատը . . . —Իժը օձ է իսկ օձը . . . —Մեխակը պարտիզի ծաղիկ է, իսկ մանուշակը . . . —Ցնծաղիկը դաշտային ծաղիկ է, իսկ վարդը . . . —Խեցիկը ամն է, իսկ կանը . . . —Արմատը բոյսի մասն է, իսկ հիմքը . . .

Ատներ։

—«Ես իմ բոլոր մատները երբոր հաշվում եմ, հինգ է լինում, ասաց Վարդանը։ «Անկարելի է, ասաց Հայկանուշը, ինչպէս կարողես այնպէս համարել, որ քո տասը մատը հինգ դառնայ։—«Կարող եմ, պատասխանեց Վարդանը,

և սկսեց համարել ցոյց տալով իւր մատների վերայ. «Մի՛ մատը, երկու՛ մատը, երեք. սրանից յետոյ չորս մատը՝ հինգ։

Հայկանուշը զարմացած նայում էր իւր եղբօր վերայ և կարծես ոչինչ չէր հասկանում, մինչև որ նա չը կրկնեց մի և նոյն բանը մի քանի անգամ։

Ուսումնարան։

Որդին

Հայրիկ խնդրում եմ	Վաղ է վեր կենում,
Ասա՛ ինձ, տեսնեմ,	Եւ ո՞ւր է գնում։
Ինչի՞ ամեն օր	Ինչի՞ մինչև ճաշ
Գէորգ եղբայրս	Տուն չէ յետ դառնում։

Հայրը։

Իմ հոգիս, եղբայրդ	Անյետեղ են գնում
Ամեն առաւօտ	Եւ միւս մանուկներն,
Վաղ ուսումնարան	Նորա ընկերներն։
Է միշտ շտապում,	Նոքա գնում են,
Եւ մինչի ճաշը	Որ ուսում առնեն,
Անյետեղ է մնում։	Եւ յետոյ բարի,

Խելօք մարդ լինին։

№ 24 Հայկական և քրիստոնէական անուններ։

Հայկ. Արամ. Գոհար. Վարդան. Վարդուհի. Հայկանուշ Աստուածատուր. Զարուհի. Գէորգ. Սուրեն. Ցոմ

Հանեսէս. Մկրտիչ. Մարիամ. Արշաւիր. Գարեգին. Տիգրան. Սարգիս. Տրդատ. Պետրոս:

Ընդ որ երեխային մկրտում են, նորան ինչ են ընձայում . . :

«Տիգրան, իմ ձիուս «տպռոշ»-ասա:—Ընչու, դու ինչ-ես շինում:» «պռոշներս սառել են, չեմ կարողանում ասել: Յովհաննէս, ասա մեղայ Աստուծոյ:—«Չէ, չեմ կարող ասել» մեղայ Աստուծոյ»: Փոկակապ Յակոբ ապեր, թէ կարաս մի փոկ կապես, ես քեզ կասեմ շնորհդ շատ, փոկակապ Յակոբ ապեր:

Ոսկին էլ ու երկաթն էլ մետաղներ են: Վարդն էլ ու շուշանն էլ ծաղիկ են: Պղինձն էլ, ու կաւն էլ . . . — Մարտն էլ, ապրիլն էլ . , . —Անտառասոկոնն էլ ու կարմրասոկոնն էլ . . . —Կարմրասոկոնն էլ ու կաղնին էլ , . . —Ամին էլ, մատներն էլ . . . —Գարունքն էլ, աշունքն էլ . . . —Ձնձղուկն էլ, ու ագռաւն էլ . . . —Անդամանդն էլ, կայծակներն էլ . . . —Խրճիթն էլ, պալատն էլ . . . —Թագաւորն էլ, աղքատն էլ . . . —Առիւծն էլ, որդն էլ . : . —Արծիւն էլ, խլուրդն էլ . . . :

Խուզած դառներին էլ Աստուած տաքացնում է:

Գարնանը ոչխարն խուզեցին. դեռ ցուրտ էր և խեղճը դողում էր ամբողջ մարմնով: Աստուած խղճաց ոչխարի վերայ և աշխարհ ուղարկեց արևի տաք ճառագայթները և ջերմ

քամին: Ոչխարը տաքացաւ և ուրախ ուրախ վազեց դէպի դաշտը, իսկ աշնանը նորա բուրդը նորից դուրս եկաւ:

Երեխան ամբողջ ամառ ուրախ ուրախ խաղում էր և թռչկոտում: Ձմեռն եկաւ և երեխան չկարողացաւ դուրս գնալ փողոց: Ցխուր նստած էր նա լուսամուտի մօտ և նայում էր դուրսը. իսկ դուրսը ձիւնը քուլայ քուլայ էր անում. Մայրը հագցրեց նորան ոչխարի բրդից գործած շապիկ և թաթմաններ, և նա ուրախ զուարթ դուրս թռաւ փողոցը ձնագունդ խաղալու:

№ 25 Աղգակցութիւն և խնամութիւն:

Հայր. Մայր, Որդի. Տղայ. Աղջիկ. Եղբայր. Քոյր. Պապ. Տատ. Թոռն. Նախահայր. Նախամայր. Հօրեղբայր. Քեռի. Հօրաքոյր. Մօրաքոյր. Հօրեղբօրորդի, Քեռորդի. Մօրաքրոջորդի. Հօրաքրոջորդի. Աներորդի. Զոքանչ. Փեսայ. Հարսն. Սկեսրայր. Սկեսուր. Խաչեղբայր. Կնքահայր. Կնքամայր. Որբ.

Քոյրն ասաց՝ եղբայր ունիմ, եղբայրն ասաց քոյր չունիմ:—Որդին հօրը, աղջիկը մօրը:—Թէ մեծ թէ փոքր, իմ մօր որդին էլ ես եմ,

---

Պատիւ տուր քո հօրն ու մօրը. հրամայում է Աստուած:

Փոքրիկ որբիկները Աստուծոյ որդիքն են:

Փայլուն երկը
Արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց
Գնաց թախկացաւ:

Փոքրիկ աստղերը
Ամպում ծածկուեցան
Եւ մութ ու խաւար
Գիշեր էր աշնան։
Ամեն մարդ գնաց,
Իրան տուն-հասաւ,

Ամեն երեխայ
Մօր կիրդը մտաւ։
Միայն խեղճ որբը
Չունի հայր ու մայր,
Չունի բարեկամ,
Ոչ քոյր ու եղբայր

Ընտէր մնացած
Աստուծոյ կամքին
Խեղճը քնած է
Փողոցի միջին։

Հայր մեր, որ յերկինս ես։

Հօր եղբայրն էլ, մօրաքոյրն էլ . . . (ազգակիցներ են)։ Արծաթն էլ, կաւիճն էլ . . . — Կիրն էլ, . . . — կաւն էլ . . . — Վարդն էլ, կակաչն էլ . . . — Ջնածաղիկն էլ, Նարգիզն էլ, . . . — Սոսենին էլ, մամուռն էլ, . . . (բոյսերն են)։ — Կատուն էլ, Նապաստակն էլ . . . — Մեղուն էլ, ու ճանճն էլ, . . . — Ցորենն էլ, Հաճարն էլ, Սոխն էլ, գաղարն էլ . . . — Երեքշաբթին էլ, Ուրբաթն էլ, . . . — Մեսաներն էլ, Քարերն էլ . . .

Բարեկենդանի երգ

Գնացէք, տեսէք, ո՞վ է կերել այգին։ Գնացին տեսին այծն է կերել այգին։ Այծն ու այգին, ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

Գնացէք, տեսէք, ո՞վ է կերել այծին՝, գնացին, տեսին գայլն է կերել այծին։ — Գայլ ու այծ, այծն ու այգին, ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

Գնացէք, տեսէք, ո՞վ է կերել գայլին՝, գնացին, տեսին սուրն է կերել գայլին։ — Սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան մեզ բարի զատիկ։

«Գնացէ՛ք տեսէ՛ք, ո՞վ է կերել գայլին», գնացին, տեսին՝ սուրն է կերել գայլին։—Սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան մեզ բարի զատիկ։

«Գնացէ՛ք, տեսէ՛ք ո՞վ է կերել սուրը։ Գնացին, տեսին ժանգն է կերել սուրը։—Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

«Գնացէ՛ք, տեսէ՛ք ո՞վ է կերել ժանգը»։ Գնացին տեսին իւղն է կերել ժանգը։—Իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

«Գնացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել իւղը»։ Գնացին տեսին, մուկն է կերել իւղը։—Մուկն ու իւղը, իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

«Գնացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել մուկը»։ Գնացին տեսին, կատուն է կերել մուկը։ Կատուն ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժանգը, ժանգը ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

«Գնացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է տարել կատուն»։ Գնացին տե-

սին հարան է տարել կատուն։—Հարան ու կատուն. կատուն ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժանդը, ժանդն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

«Գնացէք, տեսէք, ով է տարել հարսը»։ Գնացին, տեսին փեսան է տարել հարսը։—Փեսան ու հարսը, հարսն ու կատուն, կատուն ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժանդը, ժանդն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան մեզ բարի զատիկ։

«Գնացէք, տեսէք, ով է տարել փեսան»։ Գնացին տեսին Աստուած է տարել փեսան։—Աստուած ու փեսան, փեսան ու հարսը, հարսն ու կատուն, կատուն ու մուկը, մուկն ու իւղը, իւղն ու ժանդը, ժանդն ու սուրը, սուրն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին, ձեզ բարի կենդան, մեզ բարի զատիկ։

№26 Մարդիկ՝ հասակներին և պարապմունքներին նայելով։

Մանուկ. Պատանի. Երիտասարդ. Զօրական. Ներունի երկրագործ. Հովիւ. Վաճառական. Արհեստաւոր. Քահանայ ճարտարագէտ. Աստիճանաւոր. Աղքատ. Պարտիզպան։

Աղքատ ու հպարտ։—Աղքատն ունի հաց ու պանիր, գիշերը քունը չի տանիլ։—Դարբնին դանակ չի լինիլ, Ջուլհակին պատան։—Երեխին ասին ինչի՞ ես լալիս, ասաց՝ խօսքս անցա կենում, էնդուր։—Վարդապետին ասին որ-

դիդ մեռնի, ասաւ՝ ես որդի չունիմ, համա բերանդ բերան չի։

Ինչ բան է ցաքանը։ Ցաքանը երկրագործական գործի է։ Ինչ բան է ոչխարը։ Ոչխարը ընդանի, չերքոտանի խոտակեր կենդաի է։ Ինչ բան է արծիւը . . . Ինչ բան է ըրտուն . . . Ինչ բան է շուշանը . . . Ինչ բան է, ոսկին . . . Ինչ բան է բիբը . . . Ինչ բան է վարդը . . . Ինչ բան է սաժէնը . . .։

Պառաւն ու ուղտը։

Մի պառաւ ունենում է մի չար տղայ։ Ինքը պառաւն էլ փոքր յիմար է լինում։ Որդին զզուած է լինում մօր յիմար արարմունքից։ Մի օր մայրը մի փուչ բանի համար խռովում է նորանից և տանից դուրս է գնում։ Գընում է գնում մինչև դաշտը և տեսնում է որ այն տեղ, ճանապարհի վերայ մի ուղտ արածում է, և մի և նոյն ժամանակ ճանճերից նեղացած իւր գլուխը շարժում է, ճանճով է անում։ Պառաւը կարծում է, թէ ուղտը իրան է կանչում. “չէ, չէ, ասում է նա, չէ. նա իմ որդին չէ. էլ չեմ կամենում նորա սև երեսը տեսնել։ Ուղտը զարմացած նայում է և շարունակում գլուխը շարժել։ Պառաւը որ տեսնում է թէ ուղտը անդադար իրան գլխով է անում, կարծում է թէ որդին զղջացել է. մօտ է գնում ուղտին, կապը բռնում է ու տանում դէպի տուն։ Ցուն որ հասնում է թէ չէ, դուռը ծեծում է։ Որդին դուռը բաց է անում և ինչ է տեսնում. Թագաւորի ուղտը, Թանգագին բանե-

բով բեռնուած, իւր մայրն էլ կապը բռնած, դրանը կանգնած է։ Ուրախ ուրախ դուռը բացէ անում Թանկագին իրեղէնները Թագցնում է և մօրը պատուիրում է, որ ոչ ոքին բան չասի։

Մի քանի օրից յետոյ մի մարդ գալիս է և ասում է սորան, Թէ Թագաւորը՝ քեզ կանչում է։ Երիտասարդը ասում է իւր մօրը։ "Մայրիկ, դու դուռը կըպահպանես մինչև ես կըգամ,,, ու ինքը գնում է։

"Ա՛յ մարդ, հարցնում է սորան Թագաւորը, ես լսել եմ որ իմ Թանկագին իրեղէններով բեռնաւորուած ուղտը քո պառաւ մայրը գտել է Ճշմարիտ է, Թէ ոչ. խնայիր, որ եԹէ Ճշմարիտը չես խօսիլ, գլուխդ կորել կըտամ։

Երիտասարդը կամեցաւ խաբել Թագաւորին։ Թագաւորն ապրած կենայ, ասաց նա, Թշնամի մարդիկ սուտ լուր են տարածել և կամեցել են զըպարտել քո ծառայիդ. երդվում եմ իմ գլխովս որ այդպիսի բան չի պատահել։

Այս խօսքերը ասած չասած, դուռը բացվում է, և մեր յիմար պառաւը մի մեծ դուռը շալակին ներս է մըտնում։ Որդին վախենում է, որ չը լինի Թէ մայրը բոլորը խոստովանուի և հարցնում է նորան, Թէ ո՞ր ես եկել։

Պառաւը պատասխանում է. "ինչ վընաս, ասացիր դուռը պահի, ես էլ պահել եմ. կրընկահան եմ արել շալակել, բերել. որ նորան ոչինչ վնաս չըպատահի, էլ ինչ ես ուզում։

Թագաւորն հարցնում է պառաւին.-մայր իմ, ուղտը դու որ օրը գտար։

Պառաւը պլշած նայում է Թագաւորի երեսին տես-

նելով որ նորա մի աչքը քոռ է, ասում է. «Թագաւոր, ես քո ուղտը գտայ այն օրը, երբ քո աչքդ քոռացաւ։

Բարկանում է Թագաւորը և կամենում է արձակել նորանց. բայց այն րոպէին ներս են մտնում մարդիկ և յայտնում են, Թէ երիտասարդի տանը գտնուեցաւ բոլոր կորած ապրանքը։ Թագաւորը զայրանում է և հրամայում է արժանաւոր պատիժ նշանակել խաբեբայ երիտասարդին։

№ 27 Քաղաքներ և գետեր։

Ընի. Էջմիածին. Պետերբուրգ. Փարիզ. Պոլիս. Վան. Տիգրիս. Երևան. Եփրատ. Թիֆլիս. Արաքս. Մասիս. Նախիջևան. Կուր. Զանգի։

Ինչ բան է երկաթը և ինչ է արծաթը։ Երկաթը հասարակ մետալ է, իսկ արծաթը Թանկագին։ Ինչ բան է հաճարը և ինչ է անանուխը։ Հաճարը հաց—հատիկ է, իսկ անանուխը խոտ է։ Ինչ բան է գայլը և ինչ է նապաստակը . . . Ինչ բան է Անին և ինչ Արաքսը . . . Ինչ բան է մրջիւնը և ինչ մեղուն . . . Ինչ բան է քարը և ինչ է սունդը . . . Ինչ բան է մամուռը և ինչ է ծաղիկը . . . ։

Զորս ցանկութիւն։

Մկրտիչը խաղում և սրդղում էր սահնակներով սառցապատ գետի վերայ, յետոյ ուրախ ուրախ ու կարմրատակած տուն վազեց և ասաց իւր հօրը. «Ա՛խ հայ-

բիկ, ինչպէս ուրախալի է ձմեռը: Ես կըցանկանայի, որ միշտ ձմեռ լիներ»:

Դռո ցանկութիւնը գրիր իմ առ ձեռն տետրակի մէջ, «ասաց հայրը: Մկրտիչը գրեց:

Գարունը եկաւ: Մկրտիչը ազատ, ուրախ վազում էր նախշուն թիթեռների յետևից կանաչ մարգագետիններում, ծաղիկներ էր հաւաքում, յետոյ եկաւ իւր հօր մօտ և ասաց. «Ինչպէս հիանալի է գարունը: Ես կըցանգանայի որ միշտ գարուն լինէր:

Հայրը հանեց տետրակը և հրամայեց Մկրտչին որ գրի իւր ցանկութիւնը:

Ամառնացաւ: Մկրտիչը և իւր հայրը գնացին խոտ հընձելու: Ամբողջ օրը ուրախութիւն էր անում մանուկը, ձուկն էր բռնում, պտուղներ էր հաւաքում, հոտաւէտ խոտերի մէջ գլորվում էր, և երեկոյան ասաց հօրը. «Ահա այսօր ես անչափ ուրախացայ: Ինչքան կըցանկանայի, որ ամառը վերջ չունենար»:

Մկրտչի այս ցանկութիւնն էլ գրուեցաւ մի և նոյն տետրակում:

Աշունը վերայ հասաւ: Այգիներում հաւաքում էին կարմիր խնձորները և դեղին տանձերը: Մկրտիչը հիացած էր և ասաց իւր հօրը. » Աշունը տարուայ ամեն եղանակներից լաւն է»: Այն ժամանակ հայրը հանեց իւր փոքրիկ տետրակը և ցոյց տուեց նորան, որ նա մի և նոյն բանն է ասել գարնան ձմեռուան և ամառուան համար:

№ 28 Հինգ զգայարանք:

Տեսանելիք. Լսելիք. Հոտոտելիք. Ճաշակելիք. Շոշափելիք:
Աչքեր. Ականջներ. Քիթ. Լեզու. Մատներ:

Ականջը էնդուր չի մեծանում, որ շատ բաներ է լսում:— Անհունար մարդու լեզուն երկար կըլինի:— Գլխս տալու վէքին ես, աչքս դուրս գալու վէքիը չես:— Ուրիշի աչքը քեզ համար լիս չի տալ: Մի ձեռը ծափ չի տալ:

Կաղը ու կոյրը:

Կաղն ու կոյրը պէտք է անցկենային մէկ վարար առուակով: Ինչպէս անէին: Կոյրը կաղին շալակեց և երկուսն էլ ապահով անցկացան:

Արդեօք պտղատու ծառ է խնձորենին: Այո՛ խնձորենին պտղատու ծառ է: Արդեօք փոքրաշը գործի է: Ոչ, փոքրաշը սարք է: Արդեօք խաղալիք չէ քար է տախտակը: Ո՛չ քարետախտակը խաղալիք չէ, այլ դասական առարկայ է: Արդեօք գլխի մասը չէ գագաթը . . . Արդեօք մետալ չէ դաջը: Արդեօք պտղատու ծառ չէ սօսենին: Ոչխարը խոտակեր կենդանի չէ արդեօք . . . Գայլը ընտանի կենդանի չէ արդեօք . . . Արդեօք ձին խոտակեր կենդանի չէ . . . Արդեօք երասխը գետ չէ . . . Արդեօք եփրատը քաղաք չէ . . . :

Առիւծն ու աքաղաղը:

Առիւծն աքլորից խիստ է վախենում,

Նորա ձայնիցը շուտ է խոտընում.
Էշն էլ գիտէք ինչ բնութիւն ունի,
Եւ ոչքան յիմար, աղքատ է խելքի:
Դէ ականջ դրէք այս կարճ առակին
Ոչ ոք խեղճ իշին թող ծաղր չանի:
Մի օր առիւծը խիստ շատ սովեցաւ,
Շատ դէս, դէն ընկաւ շատ չարչարվեցաւ,
Անօթի փորով մէկ մեծ գիւղ մտաւ,
Մէկ չաղ շուն ճանկեց, սրբել սկսեց,
Անտէր աքլորը կոտրըն ելաւ
Ծու-ղրու-ղրու կանչեց, ճաշն հարամ արաւ:
Առիւծն աքլորի երբ ձայն լսեց,
Պոչը հաւաքեց գիւղից դուրս վազեց,
Գիժ էշը տեսաւ, ականջը սրեց,
Իւր անուշ ձայնով մի բարձր զռաց,
Առիւծի եռքից երիշով վազեց,
Քաջ մարդու նման վախցնել ուզեց:
Առիւծն որ աքլարն հեռացած տեսաւ,
Զիզգիանջ իշին իւր թաթով զարկեց,
Վերկոխեց, ջարթեց, պատանը ձևեց,
Ա՜յ անխելք հայվան, ականջումն ասեց,
Թագաւոր առիւծն քեզնից չի վախում
Աքլորի ձայնիցն է զզվում փախչում:

№ 29 Ինչ է լաւ և ինչ է վատ:

Աշխատասիրութիւն. Հպարտութիւն. Ծուլութիւն. Զանասիրութիւն. Բարեսրտութիւն. Նախանձ. Ստութիւն,

Բարութիւն. Չարութիւն. Խոնարհութիւն. Ցամաքութիւն. Ժլատութիւն. Առատաձեռնութիւն. Աղնութիւն. Շնորհակալութիւն. Տխրութիւն. Ուրախութիւն. Վիշտ:

Անքանը բան շինելիս հիւանդ է, հայ ուտելիս առողջ:—Ով աղարի, ոչ դալարի:—Ով որ վիքանայ, շուտով չէքանայ.—Խոնարհ գառը եօթը մայր կը ծծի»—Բարկացող մարդը շուտով կպառաւի:—Ով կաշխատի, նա կուտի:—

Ծոյլ դեղջուկները:

Բանն ինչ կանենք տղոտ ա, բամբակը կորզոտ ա, գոմը փոլ պիտի, որ մանենք, ծամոակ պիտի, որ ծամենք, կտերը, տիտիկ անենք, սարերին մտիկ անենք, ուտենք, նստենք, մթնի քնենք:

Զանասէր պարոնը:

Շորերս հանիր, թէք դցիր, ծածկիր ինձ, խաչակնքիր ինձ վերայ, յետոյ ես ինքս կրքնեմ:

Արդեօք ծառեր չէ՞ն սոսենին և մասրին: Ոչ, սոսենին ծառ է, իսկ մասրին թուփ: Արդեօք երկրագործական գործիներ չէ՞ն ցաքանը և արօրը : . . Արդեօք ընտանի կենդանիք չէ՞ն ձին և գայլը . . . Արդեօք հացահատիներ չէ՞ն հաճարը և կաղամբը . . . Արդեօք թանկագին քարեր չէ՞ն կլայեկը և անդամանդը . . . Արդեօք ծաղիկներ չէ՞ն ձնծաղիկը և շաղգամը : . . Արդեօք արժանաւորութիւն չէ՞ ժլատութիւնը և ծուլութիւնը . . . Արդեօք պա-

կատութիւն չէ՞ յամառութիւնը և խոհեմութիւնը . . . Արդեօք թռչուններ չէ՞ն գեղաբբուներն և կաքաւը . . .

Աղջիկն ու կովը:

Լինում է. չի լինում մի պառաւ: Այս պառաւը ունենում է երկու աղջիկ. մինը խորթ, միւսը հարազատ: Պառաւը շատ ատելիս է լինում իւր խորթ աղջկան: Ամէն առաւօտ, լուսանում է թէ չէ, պառաւը տալիս է աղջկան մի կուտ և ասում է. «Այսօր այս կովը կրտանես կ'արածացնես, այս կուտն էլ կ'ուտես, միայն աշխատիր, որ երեկոյեան կուտը ամբողջ, յետ բերես, եթէ ոչ, սատիկ կը պատժուես:

Խեղճ աղջիկը կովը քշում է դէպի դաշտ և ինքն էլ յետևից լաց լինելով գնում:

Կովը հարցնում է. «Խեղճ աղջիկ, ինչի՞ ես լաց լինում»:

—«Որովհետև իմ խորթ մայրը հրամայել է, որ ես կուտը ամբողջապէս յետ տանեմ. օ՜հ, ես քաղցած կըմեռնեմ մինչև երեկոյ: Յետոյ կովը ասում է նորան.

Մի լաց լինիր, խեղճ աղջիկ,
Քանի ես կենդանի եմ,
Իմ ծծերումն քեզ համար,
Ես միշտ կաթ կըպատրաստեմ:

Ուրախանում է խեղճ աղջիկը, սրբում է իւր արտասուքը և ամենայն օր կովի ծծերից կաթն է ծծում, և այսպիսով ամէն երեկոյ ամբողջ կուտը տանում է և չար պառաւից ազատվում է:

№ 30 թ-ի մենք եկեղեցում ինչ ենք տեսնում:

Սեղան. խաչիալ. վարագոյր. Աթոռ. Անօթներ. Աւետարան. Խաչ. Գրքակալ. Եկեղեցական Դաս. Քահանայ. Ջդեստ. Բուրվառ. Ջոհ. Սուրբ Պատկերներ.

Աստուած մեծ է:—Աստուած ողորմած է:—Աստուած կանչողը զուրկ չի մնալ:—Աստուծոյ պահած դառը դայլը չի ուտիլ:—Եկեղեցին Աստուծոյ տունն է:—Խաչը տերը զօրաւոր կանի:

Արդեօք գրանիտը և երկաթը հանքեր չէ՞ն . . . : Արդեօք կաւիճը և կայրեկը մեռալ չէ՞ն . . . : Արդեօք պարտիզի ծաղիկ չէ՞ն շուշանը և մանուշակը . . . : Արդեօք արմատն ու կտուրը ծառի մասեր չէ՞ն . . . : Արդեօք Օգոստոսը և Սեպտեմբերը աշնանային ամիսներ չէ՞ն . . . : Արդեօք պոչը և խայթոցը (*) կենդանու մասեր չէ՞ն . . . :

Մեղուներ:

Գարունը սկսուեցաւ. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւնը. անցած տարուայ դեղնած խոտերի միջից դուրս բարձրացրին նոր կանաչ խոտերի թերթերը. ծառերի կոկոները բացուեցան և փոքրիկ տերևներ առաջ բերին:

Հա՛ մեղուն էլ զարթեցաւ իւր ձմերային քնից, սրբեց աչերը իւր բրդոտ թաթիկներով, արթնացրեց իւր

(*) Клешня.

ընկերներին, և նորանք լուսամուտից դուրս նայեցին, որ տեսնեն, թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային սառը քամին անցել են:

Մեղուները տեսնում են, որ արեգակը փայլում է, որ ամեն տեղ տաք է և լոյս, նորանք դուրս են գալիս փեթակից և թռչում են դէպի խնձորի ծառը:

«Ա՛յ խնձորի ծառ, չունիս դու մի բան խեղճ մեղուներիս համար: Մենք ամբողջ ձմեռ քաղցած ենք:»

—Ոչ, պատասխանեց խնձորի ծառը, դուք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկներն դեռ պահուած են կոկոնների մէջ: Գնացէք, տանձի ծառին հարցրէք:

Մեղուները թռան՝ գնացին տանձի ծառի մօտ. «Սիրելի տանձի ծառ, արդեօք մի բան չունիս սոված մեղուներիս համար»:

—«Ա՛ղը եկէք, խնդրեմ, հոգեակներս. պատասխանում է նորանց տանձենին. այսօր ինձ վերայ ոչ մի բացուած ծաղիկ չկայ, իսկ երբ կբացուին, ես շատ ուրախ կըլինեմ ձեզպէս հիւրեր ունենալով»:

Թռան մեղուները կակաչի մօտ, նայեցին նորա փայլուն գլխին, բայց նա ոչ հոտ ունէր և ոչ մեղր:

Տրտում և քաղցած մեղուները կամենում էին յետ դառնալ տուն, բայց տեսան թփի տակը մի քիչիշ մուգ կապոյտ ծաղիկ. սա մանուշակն էր: Նա բաց արաւ մեղուների համար իւր կոկոնները, որոնք լիքն էին անուշահոտութեամբ և քաղցր հիւթով: Կերան խմեցին մեղուները և ուրախ ուրախ յետ դարձան տուն:

№ 31 Տօներ:

Աստուածամօր ծնունդը. Տեառնընդառաջ. Աւետումն. Քրիստոսի ծնունդը. Մկրտութիւն. Ծաղկազարդ. Պայծառակերպութիւն. Զատիկ կամ Քրիստոսի Սուրբ Յարութիւնը. Համբարձումն. Խաչվերաց. Տօն Սրբոյ Երրորդութեան. Հոգեգալուստ. Սուրբ Կուսի Յղութիւնը:

Ա՛յդ օր գործիր, եօթներորդ օրը հանգստացիր: Տարին մի զատիկ այն էլ նաւակատիկ:—Կարմիր ձուն զատկին կը ասի:—Աղուաւի բերնովը վարդավառին ձիւն կըգայ:

Կիւրակնամուտ:

Իրիկնաժամի զանգակը տուին,
Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին,
Վաղը կիւրակէ-Աստուծոյ օրն է,
Վերջացրէք գործերդ. հանգստեան ժամնէ:
Լսեց գիւղացին դաշտումն այս ձայնը,
Դէպի տուն քշեց եզն ու դութանը:
Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին
Լցուած մարդիկը աղօթում էին.
Քրանքի գնով գնած մոմերը
Ասպէն պէս փայլուն պրպղում էին:

Արդեօք գինին և թէյը խմելիք չէ՞ն . . . : Արդեօք մսմուռն ու բզեկը բոյսեր չէ՞ն . . . : Արդեօք Երասխն ու Զանգին գետեր չէ՞ն . . . : Արդեօք շերթաքարը և անդա-

մանդը թանկագին քարեր չե՞ն . . . : Արդեօք աղուէսը խոտակեր կենդանի չէ . . . : Արդեօք կատուն լեշաեր կենդանի չէ . . . : Արդեօք գերքը և գնդակը խաղալիքներ չե՞ն . . .

Նուրին:

Նուրին Նուրին եկել է,
Աչքայ հուրին եկել է,
Շիլա շապիկ հագել է,
Կարմիր գոտիկ կապել է,
Եղ բերէք մէջքը քսենք,
Ջուր բերէք գլխին ածենք.
Մեր Նուրինի փայը տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

Կատուն ու մկները:

Կատուն մեռաւ, ափսոս ու ախ,
Մկները այսօր խիստ են ուրախ,
Թէ որ յանկարծ վերկենայ սաղ,
Մկներին կ'անէ արէւն շաղախ:
«Ես կատու եմ մկներին մահ,
Իմ սրտումն դրել են դաղ.
Տրեխ կանեմ նորա կաշուից,
Ով չի ուզում ինձ տեսնել սաղ:
Ես արջ կատուն եմ մլաւան,
Հիմի աշխարհս կը քանդեմ,
Փորս շինեմ ձեզ գերեզման:
Բերէք, ածենք ալիւր և խին
Որ հոգոյս համար հաց թխին.
Հիմի ձեզ կոխեմ մէջ ցեխին,
Ամենը սև անեմ ձեր գլխին:

№ 32 Թէ ինչով ի՞նչ են անում:

Կացնով կտրում են, իսկ սղոցով . . . : Ինչ են անում ասեղով . . . գրչով . . . արօրով . , . ցաքանով . . . դերանդիով . . . շղթայով . . . սանրով . . . ձեւիչով . . . փոցխով . . . մանգաղով . . . դանակով . . . կողպէքով . . . դդալով . . . ձեռներով . . . ոտներով . . . ականջներով . . . աչքերով . . . բերանով . . լեզուով . . .

Մանգաղով վեր են տալի, իսկ դերանդիով հնձում են: Կացնով սղոցում են, իսկ սղոցով կտրում են: Դանակով կտրում են, իսկ ասեղով մորթում են: Թիով կասում են, իսկ շղթայով փոցխում են: Այսպէս է:

Բաղադրած Կիսլանջը:

Մի պառաւ պրնձ-պրնձուրիկ կնիկ ունենում էր երեք տղայ, որոնցից փոքրը կիսլանջ է լինում: Նորանք ապրում են խեղճ, աղքատիկ: Մի օր պառաւը ասում է իւր որդոցը, որ գնան ուրիշ աշխարհներ աշխատանք անեն: Երկու մեծ եղբայրները դուրս են գալիս, գնում են և փոքր եղբօրը չեն թողնում որ իրանց հետ գնայ. ծիծաղում են նորա վերայ և ասում են, թէ դու ինչ բան ես, որ ուզում ես մեզ հետ գալ: Խեղճ կիսլանջը մնում է տանը, իսկ եղբայրները ուրիշ ուրիշ ճանապարհով գնում են: Գնում է գընում մեծ եղբայրը և պատահում է մէկ հովուի:

«Բարի լոյս, հովիւ եղբայր»:

—Աստծու բարին, օտար եղբայր։ Օտար եղբայր, ո՞ւր ես գնում։

«Գնումեմ այս ինչ վիշապին սպանեմ և նորա գանձը առնեմ». Այս որ լսում է, հովիւը սկսում է երգել.

Ահա մի մահկանացու
Իւր գլխից ձեռք վեր առած,
Դատարկ յոյսերից խաբուած,
Կամենում է զոհ լինել
Մեծ վիշապին մարդակեր։
Արի, եղբայր, մի՛ անիր,
Փորձուած հովուիս ականջ դիր.
Ես քեզ համար կըկթեմ
Իմ երկու սև այծերը,
Մինի վերայ կընստեմ
Կըպարտեմ ողջ հօտը,
Եթէ դու այս միջոցում
Կարացիր բոլորն ուտել,
Ապա ես չեմ կասկածում,
Կարող ես նորան յաղթել։

Եւ կթեց հովիւը իւր երկու սև այծերը ու կաթնով լցրեց մի մեծ կովկիթ. բրդեց ու դրեց մեր ճանապարհորդի առաջ և ինքը հեծաւ սև այծը ու սկսեց պտըտել ամբողջ հօտի գլխով։ Պտըտեց, և երբ եկաւ ճանապարհորդի մօտ, տեսաւ, որ նա դեռ կէսն էլ չի կերել։ Բարի հովիւը նորից սկսեց երգել։

Արի, եղբայր, մի՛ անիր,
Փորձուած հովուիս ականջ դիր,
Ցեռ դառ, գլուխդ ազատիր։

Ականջ չարեց մեր ճանապարհորդը խեղճ հովուի խօսքին և սկսեց առաջ գնալ։ Գնաց, գնաց, շատն ու քիչն Աստուած դիտէ, և տեսաւ մի ուղտապան։

«Բարի աջողում»

—«Աստուծոյ բարին։—Օ՛տար եղբայր, ո՞ւր ես գնում։

«Գնում եմ այս ինչ վիշապին սպանեմ և նորա գանձը առնեմ»։—

Ուղտապանը՝ այս որ լսեց, սկսեց երգել իւր սովորական երգը.

Ահա մի մահկանացու
Իւր գլխից ձեռք վերառած,
Դատարկ յոյսերից խաբուած,
Կամենում է զոհ լինել
Մեծ վիշապին մարդակեր։
Արի եղբայրը մի՛ անիր,
Ես ուղտերիցս մինը
Կըկանգնացնեմ այս տեղ,
Եթէ նորան փչելով
Իւր տեղիցը կըշարժես,
Ապա ես չեմ կասկածում,
Որ վիշապին կըյաղթես։

Ասաց ու կանգնացրեց իւր ուղտերից մինը։ Մեր ճանապարհորդը փչեց, փչեց, բայց ուղտը տեղիցը չըշարժուեցաւ։ Այն ժամանակ ազնիւ ուղտապանը նորից սկսեց իւր երգը,

Արի, եղբայր, մի՛ անիր,
Ուղտապանիս ականջ դիր,
Ցեռ դառ, գլուխդ ազատիր։

Ծիծաղեցաւ մեր ճանապարհորդը բարի ուղտապանի վերայ և սկսեց առաջ գնալ։ Գնաց և հասաւ վիշապի տունը։ Դրան ճեղքից մտիկ արեց, տեսաւ որ վիշապը կըրակի առաջ նստած, կերակուր է եփում իւր համար։ Պառաւի տղան ասաց։

Վիշապ եղբայր, դուրս արի,
Միմեանց հետ կռիւ անենք։
Լսել եմ, որ փող ունես,
Հարստութիւն, մեծ գանձեր,
Եկել եմ քեզ սպանեմ,
Եւ սատանամ այդ փողերն։

Ուրախացաւ վիշապը, որ մի ծառայ իւր տակը եկել է իւր դուռը և ներսից պատասխան տուեց:

Օ՛տար եղբայր, քո ձայնից
Իմ սիրտս կարատվում է,
Բոլոր մարմինս երկիւղից
Ոտ ու ձեռս դողում է:

Աղաչում եմ, ինձ խղճա,
Մի սպանիր չարչար.
Մաւիր, իմ բոլոր տունս
Քեզ մատաղ է, վերառ, տար:

Խաբուեցաւ մեր ճանապարհորդը և միամիտ մնաւ: Վիշապի սենեակը: Վիշապը բռնեց իւր հիւրին և դցեց ներքնատան մէջ:

Մի-ւս օրը վիշապը լսեց, որ մի ուրիշ մարդ թակում է իւր դուռը և ասում է.

Վիշապ եղբայր, դուռս արի
Միմեանց հետ կռիւ անենք,
Լսել եմ, որ փող ունիս,
Հարստութիւն, մեծ գանձեր,
Եկել եմ քեզ սպանեմ,
Եւ ստանամ այդ փողեր:

Վիշապը զարմացաւ, որ այսպէս շուտ շուտ են հիւր գալիս իւր մօտ մարդիկ և ներսից պատասխանեց.

Օ՛տար եղբայր, քո ձայնից
Իմ սիրտս կարատվում է,
Բոլոր մարմինս՝ երկիւղից,
Ոտն ու ձեռս դողում է:

Աղաչում եմ, ինձ խղճա,
Մի սպանիր չարաչար.
Մաւիր իմ բոլոր տունս,
Քեզ մատաղ է վերառ, տար.

Ուրախացաւ մեր անծանօթը և հպարտ հպարտ ներս մնաւ, Վիշապը ուղարկեց նորան իւր եղբօր մօտ:

Անց կացաւ մի քանի ժամանակ: Մեր հովուի մօտ եկաւ մի մարդ, մի զարմանալի կիսանջ մարդ, և հարցրեց թէ այսպէսով երկու եղբայր չէ՞ն անցկացել: Հովիւը պատասխանեց, որ երկու մարդ, իւր խրատին չըլսելով գնացին այս-

ինչ վիշապին սպանելու, և աւելացրեց, թէ հիմա նորանք վիշապին ըստ կլինին դարձած: Կէս մէջքանի, մի կռնանի մարդը պատասխանեց. «Նորանք իմ եղբայրներս են և ես գնում եմ նոցա վրէժը առնելու»: Բարի հովիւը ժպտաց և երդեց.

Եղբայրներդ ջուխտ ձեռքով,
Լայն թիկունքով, հաստ վզով
Ինչ շահուեցան նորանից
Թէ դու, կիսանջ ինչ շահուիս:
Արի, եղբայր, մի անիր,
Փորձուած հովուիս ականջ դիր,
Ես քեզ համար կըկթեմ
Իմ երկու սև այծերը,
Մինի վերայ կընստեմ,
Կըպտրտեմ ողջ հօտը,
Եթէ դու այն միջոցում
Կարացիր բոլորն ուտել,
Ապա ես չեմ կասկածում,
Կարես վիշապն սպանել:

Եւ կթեց հովիւը իւր երկու սև այծերը, կոթնով լցրեց մի մեծ կովկիթ, բրդեց և դրեց մեր կիսանջի առաջ, իսկ ինքը նստեց սև այծը ու սկսեց պտրտել ամբողջ հօտի գլխովը. բայց երբ որ հասաւ մեր կիսանջին, տեսաւ, որ նա կերել պրծել է ու կովկիթը կլեկում է: Զարմացաւ հովիւը և սկսեց երգել.

Քանի տարի հովիւ եմ,
Շատ մարդիկ եմ ես տեսել,
Շատ մարդիկ հենց այս փորձով
Ես ճանապարհ եմ գցել.
Բայց այսպիսի մի զարմանք
Ողջ կեանքումս չեմ տեսել:
Գնա, եղբայր, համարձակ,
Աստուած քեզ հետ, կարողես
Զար վիշապին սպանել,
Փողն ու գանձն վեր առնել:

Առաջ գնաց մեր կիսանջը և պատահեցաւ ուխտապանին «Բարի աջողում, ուղտապան եղբայր, այս ճանապարհով երկու օտար մարդ չէ՞ն անցկացել»:

—«Աստուծոյ բարին։ Հա՛, այս ճանապարհով անցկացան երկու մարդ։ Նորանք ջոկ ջոկ էին և գնում էին այս ինչ վիշապին սպանելու։ Խեղճե՛ր։—

Կիսանջը ասաց. «Նորանք իմ եղբայրներս էին և ես գնում եմ նորանց վրէժը առնելու»։ Բարի ուղտապանը ժըպտաց և երգեց։

Եղբայրներդ ջուխտ ձեռքով,
Լայն թիկունքով, հասա վզով
Ինչ շահուեցան նորանից
Թէ դու կիսանջ, ինչ շահուիս։
Արի՛, եղբայր, մի՛ անիր,
Ուխտապանիս ականջ դիր.

Իմ ուղտերից ես մինը
Կրկանգնացնեմ այս տեղ,
Եթէ նորան փչելով
Իւր տեղիցը կըշարժես,
Ապա ես չեմ կասկածում,
Որ վիշապին կը յաղթես։

Ասաց ու մի մեծ ուղտ բերեց, կանգնացրեց մեր Կիսանջի առաջ։ Կիսանջը այնպէս փչեց ուղտին, որ ուղտը հինգ գաղ յետ ու յետ գնաց ու թըրկե՛կ վեր ընկաւ։ Ուղտապանը զարմացաւ և սկսեց երգել։

Շատ տարի է ուղտապան,
Շատ մարդիկ եմ ես տեսել,
Շատ մարդիկ հենց այս փորձով
Ես ճանապարհ եմ դցել
Բայց այսպիսի մի զարմանք
Ողջ կեանքումս չեմ տեսել։

Գնա՛, եղբայր, համարձակ,
Ասուած քեզ հետ, կարողես
Զար վիշապին սպանել,
Փողն ու գանձը վեր առնել։

Գնաց մեր Կիսանջ բարեկամը, գնաց, հասաւ վիշապի տունը, դուռը ծեծեց և ասաց.

Վիշապ եղբայր, թէ քաջ ես,
Դուրս արի, կռիւ անենք,
Բաց ու արձակ սրահում
Միմիեանց զօրութիւն փորձենք.
Ես եկել եմ հասա վզիդ
Երակները կտրատել

Եւ հասա կոկորդդդ կտրելով։ Եղբայրներս ազատել։

Զարմացաւ վիշապը այս յանդուգն խօսքերի վերայ և ուզեց Կիսանջին էլ խաբելով ներս հրաւիրել, և սկսեց երգել.

Օտար եղբայր, քո ձայնից
Իմ սիրտս կտրատվում է։
Բոլոր մարմինս երկիւղից
Ոտն ու ձեռս դողում է.

Ազատում եմ, ինձ խղճա,
Մի՛ սպանիր չարաչար.
Մտի՛ր, իմ բոլոր տունս
Քեզ մատաղ է, վե՛ր առ, տար։

Ճնաբուեցաւ խելօք Կիսանջը և սկսեց նորից երգել։

Ջուր տեղն ես աշխատում,
Վախիտ վիշապ, ինձ խաբել։

Ինձ Կիսանջ են անուանում.
Եկել եմ, քեզ սպանեմ։

Բարկացաւ վիշապը, կատաղեցաւ այս ծաղրալի անուան վերայ, դուրս վազեց զայրացած, որ յանդուգն մարդու մեծ պատառը ականջը թողն։ Բայց Կիսանջը վաղուց քաշուել էր պատի տակը։ Վիշապը գլուխը դուրս հանեց թէ չէ, քանջն Կիսանջ իւր լըրանոց թուրը որ վրայ չըբերեց, նորա գլուխը երկու կտոր եղաւ։ Սարի նման վիշապը վեր ընկաւ և սատակեցաւ։ Գնաց Կիսանջը ևիւր եղբայրներին ողջ ու առողջ հանեց վիշապի բանդից։ Բոլոր տունը պտըտցին, մանեկան և վերջապէս գանձը դատն։ Բայց եղբայրնելի սիրտը փոխուեցաւ։ Նորանք նախանձուեցան, որ իրանց փոքր եղբայրը այդ քաջութիւնը արաւ, այս պատճառով գցեցին իրանց աղատողին հորի մէջ, վերառան իրանց տակով լիք պարկերը և ճանապարհ ընկան դէպի տուն։ Բայց Կիսանջը հորի մէջ չըմեռաւ։ Նա իւր եղունգներով ոտնատեղեր շինեց և շատ չարչարվելուց յետոյ դուրս եկաւ

հորից, վեր առաւ իւր ոսկով լեք պարկը և ճանապարհ ընկաւ։ Գնաց, տեսաւ, որ իւր եղբայրները իրանց պարկերը վեր են դրել ծառի տակը և շուտ-շուտ քնել։ Կամաց կամաց մօտ գնաց, զգուշութեամբ վերառաւ պարկերը, տարաւ թափեց նորանց միջն ոսկին մի նշանով տեղ, մէջները մանր խիճով լցրեց և բերեց իրանց առաջուայ տեղը դրեց ու ինքը թախկացաւ։ Եղբայրները վերկացան, վեր առան իրանց պարկերը և ճանապարհ ընկան դէպի տուն։ Կիսանջին էլ գնում է նորանց յետևից։ Երբ որ մեր ապերախտները տուն հասան, դուռը ծեծեցին և ասացին.

Մայրիկ մայրիկ, դուռը բաց.
Վիշապին սպանեցինք,
Նորա ոսկին պարկերով
Շալակած այստեղ բերինք։

Պառաւը, ոսկու ձայնը որ լսեց, ուրախ ուրախ դուրս վազեց, որդկերանցը համբուրեց, ապա շտապեց, մի թաբախ բերեց և ինչ դարտակեց-խիճ։ Եղբայրները փայտի պէս սառած մնացին։ Մին էլ տեսնես հերթիցը մի ձայն եկաւ։

Մայրիկ, մայրիկ, դուռը բաց,
Վիշապին սպանեցի,
Նորա ձեռքից ես դորանց
Ոսկի ու առոսկի փրկեցի,
Իսկ դորանք ինձ խաբեցին.
Ուզելով ինձ սպանել
Հորի մէջը ձգեցին
Բայց Աստուած ինձ օգնական
Այն խոր հորից աղատեց,
Դորանց պատիժն էլ տուեց,
Պարկերն խիճով լցրեց.
Միայն դորանց, մայր, ներիր
Եւ տանից մի դուրս անիր։

Համբուրեց մայրը իւր բարի Կիսանջին և նորա համար ճուաձեղ արեց։

№ 33 Թէ ով ինչէ անում։

Վարժապետը ինչ է անում։ Վարժապետը ուսուցանում է։ Ինչ է անում աշակերտը ... քահանան ... զինուորը ... երկրագործը ... վաճառականը ... ատիճանաւորը ... պարտիզպանը ... հովիւը ... որսորդը ... ձկնորսը ... հիւանը ... բրուտը ... քարտաշը ... սեղանագործը ... կաղմարարը ... կոշկակարը ... դարբինը ... բժիշկը ... Հանասէր աշակերտը ... չարը ... ծոյլը ... ձին ... կովը ... կատուն ... մեղուն ... որսի շունը ... ոչխարաշունը ... թաղին ...

Վախկոտ Յովհաննէսը։

Յովհաննէսի մայրը տաշտումը խաշ հունցեց և գբրեց վառարանի վերայ, որ քացախի, իսկ ինքը գնաց հարևանի տուն։

Յովհաննէսը մենով տուն եկաւ, կանչեց, ձայն տուեց—մարդ չկայ։ Յետոյ նա ուզեց կրակ վառել. մին էլ լսեց, որ մի բան վառարանի վերայ պճղպճում է։ «Գրեմ քաջքէ», մտածեց Յովհաննէսը, ու վախից սկսեց դողդողալ, վեր դցեց ձեռքից լուցկին և սկսեց փախչել։ Մըթնումը նորա ոտովն ընկաւ կրակասառնին, որի ծայրը նորա ճակատին դիպաւ։ «Վայ, վայ, Աստուած, օգնեցէք, օգնեցէք», գոռաց Յովհաննէսը և կամենում էր դուրս փախչել տանից։ Այս միջոցին հակառակի պէս, նորա տրեխի ծուպը յետ էլաւ և դուռը յետ գնելիս տակովն էլաւ։

Յովհաննէսը շեմքի վերայ փռուեցաւ և ողբալի ձայնով կանչում էր. «վայ, Աստուած, վայ, օգնեցէք. ազատեցէք, քաջքը բռնել է ինձ»:

Արևանները եկան բարձրացրին կիսակենդան Յովհաննէսին, բայց երբ որ իմացան, թէ բանն ընչումն է, ըսկըսեցին նորա վերայ ծիծաղել: Յետոյ շատ երկար ժամանակ ամենքը բարկացնում էին Յովհաննէսին և ասում էին, թէ նա ինչպէս վախեցաւ տաշտի խմորից, անկիւնում դրած կրակասառնուց և իւր տրխի ծուակերից:

№ 34 Թէ ինչը ինչ են անում:

Մահուտը չափում են, իսկ փողը համարում են: Աւազը ցրվում են, իսկ ջուրը . , . . խոտը հնձում են, իսկ մաղերը . . . թելը մանում են, իսկ քամանը . . . շորը կարում են, իսկ գուլպան . . . գինին խմում են, իսկ հացը . . . հաճարը հնձում են, իսկ միրուքը . . . խորոված խորոված են, իսկ սպանը . . . ծաղիկները ջրով ջրում են, իսկ հրդեհը . . : թելը ասեղի մէջ են անցկացնում, իսկ մեխը (պատի մէջ) . . . Ամոռը կարելի է կոտրել, իսկ բաժանկը . . . (փշրել): Գինին կարելի է վերածել, իսկ սիսեռը (շաղտալ : Հացը կորում են, իսկ շաքարը . . .

Ինչ կրցանես, այն կըհընձես:—Ինչ կրբրդես այն կուտես:

Աղուէսն ու կճուճը:

Պառաւը գնաց դաշտը հունձ անելու և թիլի տա-

կին պահեց կաթնով լի կճուճը: Աղուէսը այս բանի հոտն առաւ. մօտ եկաւ, գլուխը կոխեց կճուճի մէջ և կաթը լակեց. յետոյ կամեցաւ հետ դառնալ, բայց ցաւն այն էր, որ գլուխը չէր կարողանում կճուճից հանել: Գնում է աղուէսը, գլուխը թափահարում է և ասում է. «Է՛հ, այ կճուճ, դէհ ինչ որ հանաք արիր բաւականէ, թող ինձ, ես քո խաղաստաղիկը չեմ: Բայց կճուճը ամենևին նորան բաց չէ թողնում: Աղուէսը բարկացաւ. «Սպասիր անիծած, քո կամքով չես թողնում, տես հիմա ես ինչպէս կրխեղդեմ քեզ», ասաց ու գնաց գետը, որ նորան խեղդի: Բայց երբ գլուխը ջրի տակը կոխեց, կճուճը ջրով լցցուեցաւ ինքը տակ արեց ու աղուէսին էլ հետը տարաւ:

№ 35. Կենդանիների ձայները և շարժողութիւնները:

Նապաստակը ցատքում է, իսկ ծիծեռնակը . . . Որդը սողում, իսկ ձուկը . . . Ձին չափ է ընկնում (արշաւում է), իսկ օձը . . կովը բառանչում է, իսկ ձին . . . Շունը հաչում է, իսկ կատուն . . . Ոչխարը . . . այծը . . . խոզը . . . սոխակը . . . ճնճղուկը . . . կաչաղակը . , . ագռաւը . . . աղաւնին . . . հաւը . . . կկուն . . . գորտը . . . մուկը . . . ճանճը . . . :

Ոչխարն իր դարդը կըլայ, ագռաւը զա՜ռ, զա՜ռ կանի: կատուին ասին հերդա լաւ թէ մերդ,, ասաց մլաւ մլաւ: Հաւը կռկռալիս իմացիր որ փորացաւ ունի:—Շունը հաչելով կըսատկի:

Աղուէսը ու գայլը։

Աղուէսը շատ սոված էր. նա մեն էր գալիս ճանապարհներում և չորս կողմը մտիկ էր տալիս, որ մի բան գտնի ուտելու։ Նա տեսնում է, որ գիւղացին սայլակը ձկնով լիքը՝ քշում է ու երգում։ Աղուէսը առաջակտրուկ է անում, ճանապարհին պառկում է և սուտամեռնուկ է տալիս։ Գիւղացին երբ որ մոտենում ու տեսնում է ոտները չուած աղուէսին, կարծում է թէ սատկած է։ «Ի՜նչ լաւ մորթի ունի, մտածում է նա, սորանից ինձ համար լաւ քուրքի օձիք (եակայ) կըկարուի, ասում է ու պոչից բռնում դցում է սայլակի մէջ ու մի կաշուի կտոր ծածկում վերան, իսկ ինքը միամիտ իւր ձին քշում։ Մի փոքր ժամանակ հանգիստ է մնում աղուէսը, յետոյ սայլակի տակի տախտակը ծակում է և այն տեղից վեր է ածում ձկները։ Երբ որ բոլոր ձկները վեր է ածում, պրծնում, յետոյ կամաց կամաց ինքն էլ դուրս է սողում սայլակից։ Ցուն է հանում խեղճ գիւղացին և ինչ է տեսնում—ոչ ձուկ կամ սայլակումը, և ոչ քրքացու։

Աղուէսը բոլոր ձկները իւր բունն է հաւաքում, նստում է դրան առաջը ու սկսում է անուշ անել։ Մէկ էլ տեսնես, որ դեղից որ, մի գայլ, սոված, յետին թէլը ընկած, մոտենում է իրան։ Բարի աջուղջուն աղուէս եղբայր, այդ ի՞նչ ես ուտում»։ Ձուկը, դայլ եղբայր։ «Մինչ՞ն ինձ տա՞ս»։—Ո՛նց չէ, բերանդ բաց արա՝, ինչ խելք ես. ես որսամ, դու ուտես։—«Դոնե գլուխը աղուէս եղբայր»։—Ոչն էլ չեմ տալ. ինքդ որսա և կեր։—«Ապա դու ինչպէս որսացիր, սովորեցրու»։—Շատ լաւ. կգնաս գետի մոտ, սառուցի մէջ մի ծեղք կըգտնես, պոչդ այնտեղից ջրի մէջ կըկախես և կասես. ձկներ, ձկներ, եկէք պոչիցս կպէք. էհ նորանք էլ կըգան, կըկպչեն։

Գայլը այնպէս էլ արեց. գնաց սառուցի մէջ մի բացուածք գտաւ, այնտեղից պոչը ջրի մէջ կախ արաւ, սառուցի վերայ պպզեց ու փընթ-փընթաց. «Հաւաքուեցէք, մեծ ու մեծ ձկներ, հաւաքուեցէք ու պոչիցս կպէք»։ Իսկ աղուէսը մոտ եկաւ և սկսեց երգել։

Սառուց սառուց կուչ արի,
Կտոր կտորից կպի,
Գայլի պոչը պինդ բռնի։

«Ի՞նչ ես ասում աղուէս եղբայր, հարցնում է գայլը»։—Նոյնը ինչ որ դու ես ասում, դայլ եղբայր։—Յետոյ գայլը սկսեց էլի իւր երգն ասել, իսկ աղուէսը իւրը։

«Մի թէ՞ ժամանակ չի ձկները դուրս քարշելու, աղուէս եղբայր, հարցնում է գայլը»։—Ո՛չ բարեկամ, դեռ ժամանակ չէ. երբոր ժամանակը գըկայ ես կասեմ։ Յետոյ երկուսն էլ շարունակում են իրանց երգը։ Աղուէսը տեսնում է, որ ծեղքը լաւ սառել է և ծայրերը կպել, ասում է. «Դէհ, հիմա բարեկամ դուրս քարշի։—Գայլը ձգում է, ձգում, բայց որտեղ . . . ։

Տես թէ որքան ագահես, յանդիմանում էր նորան աղուէսը, անդադար կըրկնում ես թէ հաւաքուեցէք, մեծ ու շատ մեծ ձկներ, հաւաքուեցէք, և հիմա այնքան հաւաքուել են, որ չես կարողանում դուրս հանել։ Սպասիր ես կերթամ գիւղից օգնութիւն կըկանչեմ». Աղուէսը վա-

ղեց գիւղը սկսեց պատուհանների տակից բղաւել.» Ե-
կէք, եկէք, գայլն սպանեցէք, որ սառուցիցնէ կպել, չէ
պոկ գալիս: Դուրս են թափվում գիւղացիք իրանց խրը-
ճիթներից, որը կայ ինը ձեռքին որը եղանը: Գայլը տեսաւ
թէ բանն ինչ տեղ հասաւ, որքան զօրութիւնումը զօր կար
ձգեց, պոչը կորեց և անպոչ սկսեց փախչել. իսկ աղուէսը
սկսեց նորա յետևից կանչել. «Յետ դառ, բարեկամ, յետ
դառ, ձկները մոռացար, վեր առ տար»:



ԱՂՕԹՔ ՆԵՐ:

Յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն:

Աղօթք Սրբոյ Երորդութեան

(Փառաբանական.)

Փառք և երկրպագութիւն 'ի բարձունս Հօր և Որդւոյ
և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից
ամէն:

Առ երրորդութիւնն։

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն։

Աղօթք Տէրունական։

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց և մի՛ տանիր զմեզ ՝ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՝ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամեն։

Աղօթք սրբուհւոյ Աստուածածնի։

Ընկանիմք առաջի քո Տիրամայրը Սուրբ Աստուածածին և աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա՛ վասն անձանց մերոց և աղաչեա՛ զՄրիածին Որդիդ, փրկել զմեզ ՝ի փորձութենէ, և յամենայն վտանգից մերոց։

Աղօթք յարութեան։

Քրիստոս յարեաւ ՝ի մեռելոց մահուամբ զմահ կոխեաց. և ցարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց նմա փառք յաւիտեանս ամեն։

Աղօթք խաչի։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկիրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն աղգի մարդկան։ Եւ այժմ վասն Աստուածային քոյ նշանի շնորհեա՛ զերկնային զնաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

Աղօթք առաւօտեան։

Զառաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս ընկալ ամենակալ ամենամեծդ Աստուած ՝ի քո անապական և յերկնային խորանդ։ Ծագեա՛ առ մեզ զնմանութեան զլոյս քո, որ՝ զմեզ որդիս լուսոյ և որդիս տուրնջեան։

Որպէս զի ՝ի զալ աւուրս երկիւղածութեամբ կատարեսցուք։ Զի դու ես օգնական և փրկիչ մեր և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. Այժմ՝։

Աղօթք հանգստեան։

Տէր Աստուած մեր՝ դու պահեա՛ զմեզ ՝ի դիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բևեռեալ պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր։ Որպէս զի յամենայն ժամ քեզ պահպանեալ լեցուք յոլոգութենէ թշնամւոյն և քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Այժմ՝։

Մաղթանք հանգստեան։

Զհանգստեան զաղօթս և զաղաչանս ընկալ Մարդասէր Աստուած ՝ի հաճոյս բարերար կամաց քոց. մեր մեղսց և բաղում յանցանաց թողութիւն շնորհեա՛ և քեզ փառք յաւիտեանս ամեն։

ԵՐԳԵՐ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ.

Մայրենի՛ լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տկար
Հնչումես իմ մէջ դու միշտ անդադար։

Ո՜հ, ինչպէս պլտոր է սրտիս օրը,
Երբ պանդուխտ էի օտարի տանը,
Եթէ հարկ էր ինձ այլ ազգի լեզուով
Իմ միտքը յայտնել օտար բառերով,
Որ երբէք սիրել կարելի չէ ինձ,
Որ ձայն ողջունի բնաւ իսկ չէ ինձ։

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ի՞նչպէս քաղցր հնչումես ինձ դու,
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր դերեզմանից։

Ունէ՛ր դու հնչի՛ր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու բարբառ սիրական.
Արի բարձրացիր հնութեան փոշուց,

Դու իմ Հայ լեզու մոռացուած վաղուց.
Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով։

Ամենայն տեղ փչում Աստուծոյ շունչը,
Սուրբ է այն միւս, այլ ձևն ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր
Իմ երանական մտածութիւնը.—
Ապա կ'խօսեմ իմ մօրս խօսքը։

ՕՐՐՈՑԻ ԵՐԳ

Քուն եղի՛ր Պալաս աչքդ խուփ արա՛
Նաշխուն աչերուդ քուն թող դայ՝ վրայ
Օր օր օր Պալաս, օր օր օր Նանի
Իմ անուշ Պալիս քունը կ'տանի։

Օսկէ խաչ վզիդ քեզի պահապան
Նարօտ կապել է Ծարէն տէր պապան.
Օր օր օր Պալաս, օր օր օր Նանի
Իմ անուշ Պալիս քունը կ'տանի։

Մալի հիլուներ կախել եմ ալ
Նազար չես առնուր, քու եղի՛ր մի լար,
Օր օր օր Պալաս, օր օր օր Նանի
Իմ անուշ Պալիս քունը կ'տանի։

Ես քանի մօրդ, անքուն աչքովը —
Անցել են օրեր օրոցիդ քովը
Օր օր օր Պալաս օր օր օր Նանի

Իմ անուշ Պալիս քունը կ'տանի։

Օրըցքդ օրեմ, օրով բոյ քաշես.
Մղկտան ձայնով սիրտս չի մաշես, օր օր օր ...
Դուն ալ քուն եղի՛ր ինձի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածածին Մանուկիս քուն տուր,
Օր օր օր Պալաս և այլն։

ԳԵՐԻ ՑՈՅՆ ԲԱՆՏՈՒՄԸ.

Հայրենիք սրբազան,
Իմ սիրուն աշխարհ,
Թռչումեմ դէպի քեզ
Հոգովս անդադար։
Բայց աւա՜ղ այս բանտում
Փակուածեմ անտես,
Պատերազմի դաշտում
Չեմ կռվում և ես։
Հանապազ տանջուելոյ
Քո ճակատագրով,
Սրտումս շղթաների
Զայներ կրելով։
Թո՛ղ այստեղ չարչարվիմ
Անծանօթ կապուած,
Միայն քեզ Հայրենիք
Տեսնեմ . . . . . ։
Ախ, քո . . . . . .
Փոթորկի մէջ է
Եւ վառ արշալուսի
Օրը քո խաւրումէ։

Չ' գիտեմ ինչպէս է
Կռիւն հրդէհում,
Ես չունիմ ոչինչ լուր,
Բայց լուրն է թռչում։
Ստանումեմ միշտ համբաւ
Սպանութեան ահեղ,
Թափվումէ ազգ- արիւն
Բայց ես չեմ այն տեղ։
Կ' փշրեմ իմ շղթան,
Կելնեմ այս բանտից,
Սրբել դառն արտասուք
Քո սէգ աչերից։
Քաջարնկերներով
Հեշտ է ինձ կռուել
Եւ սուրբ գործի համար
Քաղցրէ մեռանել։
Չեմ կարող մոռանալ
Իմ ազգ հարազատ.
Ախ կամ ոչնչանալ,
Կամ լինիլ ազատ։

ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԻ.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու դարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր ինձ ասա՛
Թռչում ես այդպէս արագ։
Ե՞ս թռիր ծիծեռնակ,
Ծնած տեղս Աշտարակ.
Անդ շինի՛ր քո բունդ
Հայրենի կտուրի տակ։
Անդ հեռու ալեոր
Հայը ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասումէ օրէ օր։
Երբ տեսնես դու նորան,
Ինձնից շատ բարև արա,
Ասա. թո՛ղ նստի լոյ
Իւր անբաղտ որդւոյ վերայ։
Դու պատմէ՛ թէ ինչպէս
Ամա անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշուել եղել կէս։
Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։

Ասիր, որ չը բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ
Հայրենի հողից զրկուած։

Դիհ սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր թռիր արագ,
Դէպի Հայոց երկիրը,
Ծնած տեղս Աշտարակ։

ԴՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳԸ։

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ
Իւր որդիքը արդ կանչում է
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ։

Մեր հայրենիք շղթաներով
Այս քան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։

Ահա եղբայր քեզ մի դրօշ
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ
Արտասուքով լուացի։

Նայիր նորան երեք գունով
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանուի Ասորիան։

Ինչքան կին մարդ մի թոյլ էակ
Պատերազմի գործերում,
Կարէ օգնել իւր եղբօրը
Զանց չարեցի քոսիրուն։

Ահա իմ գործ, ահա իմ դրօշ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս,
Գնա, փրկիր մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս։

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ միանգամ պիտի մեռնի,
Բայց երանի՜, ...
. . . . . .

Գնա եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալերը,
Գնա, թէև չէմ կարող դալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր։

Գնա, մեռիր դու քաջի պէս,
Թող չըսենք թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է խռալացին։

Ո՜հ, իմ սիրտը կորատվում է
տեսանելով այսպէս սէր,
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։

Ո՛հ արտասուք ինձ խեղդումեն
Այլ չեմ կարող բան խօսել
Չէ . . . . թշուառ չէ Իտալեան,
Եթէ կանայք այսպէս են։

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ (*)

I

ԳԻՒՂԱՑԻՆ

Գիւղացին ո՞նց է անում,
Իր արտումը բանելիս,
Լիւն, քրտինք թափելիս,
Երբ որ ցորեն է ցանում։
Գիւղացին ո՞նց է անում։

Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը ցանում է,
Լա, լա, լա, (4 անգամ։)

Գիւղացին ո՞նց է անում
Իր արտումը բանելիս,
Սիրուն ցորենն հնձելիս,
Աշխատելով անդադրում։
Գիւղացին ո՞նց է անում։
Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը հնձում է։
Լա լա լա և այլն։

Գիւղացին ո՞նց է անում։
Երբ անհամար հասկերը
Ծածկումեն իր արտերը,
Եւ իր ցորենն է կրում։
Գիւղացին ո՞նց է անում։
Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը կրում է։
Լա լա լա և այլն

Գիւղացին ո՞նց է անում։
Արտերը յետ դառնալով
Ամբարը լի ցորենով,
Երբ իր ցորենն է կալսում։
Գիւղացին ո՞նց է անում։
Ահա այսպէս անում է,
Երբ ցորենը կալսում է։
Լա լա լա . . . .

(*) Այս երեք մանկական խաղերը առնելով «մանկական պարտէզ» գրքից հաղորդեց մեզ Պ. Ս. Պարասանեանցը որին յայտնում ենք մեր հրապարակական շնորհակալութիւնը։

Գիւղացին ո՞նց է քնում,
Իր խրճիթը յետ դալիս,
Պարզ անկողին մտնելիս,
Բուք քամուց անհոգ լինում,
Գիւղացին ո՞նց է քնում։
Այսպէս քնումէ խաղաղ
Սիրաբ հանգիստ և ուրախ։
Լա լա լա . . . .

Ապա անհոգ գիւղացին,
Ցետ ծանր աշխատանքին,
Նոր ոյժ նոր սիրտ է առնում
Զբօսնումէ ու երգում։
տրա, լա, լա, և այլն

II

ՊՍԱԿՆԵՐ.

Մէկ սիրտ լինինք
Եւ մէկ հոգի
Զի միութիւնն
Դեղեցիկ զարդ է կեանքի։
Լա լա լա և այլն.
Ինչպէս խաղում,
Որ գոհ լինինք
Միշտ պէտք ունիմք
Միութիւն մենք և սիրոյ։
Լա լա լա և այլն։

ՎԱՐԴԷ ՊՍԱԿ։

Վարդ ծաղկին լինինքնման
Եւ օրինակ հեղութեան,
Թող վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վերայ։
Լա, լա, լա, և այլն։

ՄԱՆՈՒՇԱԿԷ ՊՍԱԿ։

Ազնիւ, սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Ցուր մեզ ծաղիկ գեղեցիկ
Քո քնքոյշ հոտ անուշիկ
Լա, լա, լա և այլն,

ՇՈՒՇԱՆԷ ՊՍԱԿ։

Օրինակ անմեղութեան,
Դաշտի սիրուն դու շուշան,
Նէ, զարդ եղիր մեր պարին
Նէ, միացիր մեր երգին։
Լա, լա, լա, և այլն։

ԿԱՂՆԻ ՊՍԱԿ։

Կանաչ խոտը դաշտերի
Մեր սրտին է սիրելի.

Թող ճիւղը կաղնի ծառին
Պատակ լինի մեր դլխին։
Լա, լա, լա և այլն։

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Սիրուն կանաչ պսակին,
Թող միանանք բարեկամք
Եւ յոյսերը անբաժան
Մնան մեզնից յաւիտեան։

III

ԱՂԱՒՆԱՏՈՒՆ։

Երբ բացվումէ աղաւնատուն,
Թռէ՛ք, գնացէ՛ք, բոլորդ դաշտում
Սիրուն, սպիտակ աղաւնիներ,
Թափ տուէ՛ք ձեր փետուրներ։
Թռէ՛ք, թռէ՛ք մենչև դաղրիք,
Բայց երբ դիշերը կը դայ,
Մտածեցէ՛ք վտանդի վերայ,
Դաշտից շուտով յետ վազեցէ՛ք։
Չի երբ ժամը կը հնչի,
Հաւատունը կփակուի։

I

ԳԻՒՂԱՑԻՆ։

Առաջին տողերը երգելիս երեխաները մէկ մէկի ձեռք բռնած շրջանակ են կազմում մանգալով։ Հինգերրորդ տողը երգելիս կանգնում են և յետոյ շրջելով և երբեմն կանգնած . . . ներկայացնում են դիւղացու սերմնարկութիւնը բռնելով իրանց փեշի ծայրերը կամ դոգնոցը և ասելով «Ահա այսպես է անում և այլն։» Մինոյն ձևով ներկայացնում են նոքա գիւղացու բոլոր գործողութիւնները — ինչպես է հնձում, ինչպես է կրում, և ինչպիսի կալում։ Իսկ վերջին տողերը երգելիս նոքա մեղմելով

իրեանց ձայնը սակաւ առ սակաւ խոնարհվելով չոքում են մէկ ծնկան վերայ և գլխները հանգստացնելով մի հատ ձեռի մէջ, քնած են ձևանում, յետոյ «վերկենալով երգում են, ,,Ալա անհոգ գիւղացին։» և այլն,.

II

ՊԱՍԱԿՆԵՐ։

Երեխաները փոքր խմբերով բաժանվում են չորս տեղ պսակների թռուով և իրաքանչիրը մի պսակ է ներկայացնում առանձանապէս կարգով երգելով իրեան յարմարեցրած երգը և միևնոյն ժամանակ շրջանակ կազմելով իր դրութեամբ։ Վերջին տանը հասնելով բոլոր խմբերը միանում են մի ամբողջ շրջանակ կազմելով և պատյտ դալով միմեանց ձեռք բռնած և երգում են «Սիրուն կանաչ պսակին և այլն

III

ԱՂԱՒՆԱՐԱՆ։

Երեխաները միմեանց ձեռք տուած շրջանակ են կազմում ներկայացնելով աղաւնարան։ կենդրոնում կանգնում են մի քանի երեխաներ, որոնք ներկայացնում են աղաւնիներ։ Շրջանակը սեղմվում և դարձեալ ընդարձակվում է։ Եւ այդ ժամանակ նորան կազմող երեխաները բարձրացնում են իրեանց ձեռները, ներկայացնելով աղաւնարանի դռներ։

Երբ երգվում է ,,թռէ՛ք, գնացէ՛ք՝՝. աղաւնիները փախչում են և այս կողմ այն կողմը վազելով վերադառնում են, երբ երգվում է, «Չի երբ ժամը կը հնչի։»

ԱՂՕԹՔ։

Երեշտակ զուարթուն
Հզօր պահապան մեր,
Որ զմիւն ողջոյն
Զմեզ խնամեցեր։

Ամուսս արփոյն
Դու լոյս անստուեր ես մեր,
Անմուտ արև
Կացցես մեզ յայս դիշեր։
Հրուն քաղցր անփորձ
Շնորհեա՛ Աստուծոյ
Եւ զծնողս հոգւոց և մարմնոց կեցո։

Տպագրութեան սխալներ.

			Փոխանակ	կարդայ
Երես	20	տող 2	Նաւատողմիզ	Նաւատորմիզ.
,,	23	,, 1	Ընդանի.	ընտանի,
,,	26	,, 5	վանդը.	Վաղը·
,,	27	,, 17	գեղծանիկներ	Դեղձանիկներ.
,,	29	,, 7	Զկեր	Զկներ.
,,	,,	,, 13	Ծղրիդներ.	Ծղրիտներ.
,,	32	,, 15	Այն ինչ ծաղիկէ	Այն ինչ ծաղիկէ-
,,	39	,, 3	օգնութեանբ	օգնութեամբ.
,,	,,	,, 7	գիւղամ	գիւղում.
,,	,,	,, 21	Թարնի	Թարնի
,,	41	,, 10	Ներկուզով	ընկուզով.
,,	,,	,, 20	աքաքաղաղն	աքաղաղն·
,,	48	,, 12	սոսեց	սկսեց.
,,	50	,, 1	լուամուտից	լուսամուտից.
,,	59	,, 4	ընդանի	ընտանի-
,,	59	,, 4	չերքոտանի	չորքոտանի
,,	62	,, 8	կրցանդանայի	կցանկանայի.
,,	63	,, 7	ծաֆ	ծափ·
,,	,,	,, 14	քար է տախտակը.	քարեատախտակը.
,,	65	,, 9	ծոյլ գեղչունկներ	ծոյլ գեղջուկներ.
,,	6:	,, 19	ժառեվի	ծառերի.

Միւս մանր սխալները պ. պ. ուսուցիչներին ուղղել կ'խնդրեմ։

«Ազգային գրադարան»
NL0349815